


ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵԱՐ—ԳՈՍ

ՍԱՔՈՒԼՆ ՈՒԽՏ ԳՆԱՑ
←
ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿԵՑԻՆ



ԹԵՏՏՐԱՏ

16 NOV 2011

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

891.99

Հ-40

մ.մ.

ՆԱՐ-ԴՈՍ

ՍԱՔՈՒԼՆ ՈՒԽՏ ԳՆԱՅ

ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿԵՑԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1938

19 Գամ. 07 Խելքողիր՝ Սիրաս
Տէխ. Խմբագիր՝ Ան. Գասպարյան
Արդադրիչ Թ. Հովհանիկիմյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

Գրամքիլիտի լինազոր՝ Ա—3079. Հրատ. 4176.
 Պատվեր 1329. Տիբաժ 5000 թուղթ 62×94.
 Տպագր. 9 մամ.
 Մեկ մամ. 24480 նշան. Հեղինակ. 1^η/₈ մամ.
 Հանձնված ե արտադրության 17 դեկտեմբերի 1937 թ.
 Ստորագրված ե տպագրության 20 փետրվարի 1938 թ.
 Գիլը 50 կ.

ՍԱՔՈՒԼՆ ՈՒԽՏ ԳՆԱՑ

Դուրսկար Սաքուլը կամաց բաց արեց դուռը և
ներս մտավ:

Նըս կինը, Նատոն, թեերը մինչև արմունկները
քշտած՝ պազած եր հատակի վրա և լվացք եր անում
կոծկած թարակում։ Բուփարու մեջ կասկարայի վրա
դրած կաթսայի տակ մի քանի բարակ փայտ եր
ծխում։ Հողի հատակի վրա բավական ցեխ եր գոյա-
ցել և լվացքի սապնոտ ջուրը տեղ-տեղ գուր եր կա-
պել։ Սենյակի ողը հագեցած եր խոնավության,
սապնաջրի և ծխի գարշ հռտով։ Թախտի վրա դրած
որորոցի մեջ քնած եր ծծի յերեխան։

կիւնը նայեց մարդու հիվանդու, թախծալի յերե-
սին, և նրա սիրտը ձմբվեց: «Ելի լավ չի»— մտածեց
նա և վշտահար մնաց նայելիս մարդու յերեսին:

Սաքուլը դուռը յետ դրեց, գնաց գեղի թափառը,
մութաքեն առաջ քաշեց և պառկեց:

— Մի բան զցի վրես, —ասաց նա թույլ ձայնով և
վոտները կուչ ածեց:

Նատոն սապնոտ ձեռները սրբեց, վեր կացավ,
բարձրացավ թախտը, ցեխոտ չուստերը թողնելով
գետնին, ծալքեց հանեց բավական մեծ ու հաստ մի
վերմակ և ծածկեց մարդուն:

— Լավ ծածկի, ջանս սրբութում ա, — ասաց Օա-
քուլը, վերմակը գլխին քաշելով:

Նատոն վերմակի ծայրերը ներս կոխեց կողքերից,
վոր բաց տեղեր չմնան:

— Ուզո՞ւմ ես, մի լըհեր ել ծածկեմ, — ասաց:
— Ծածկի:

Նատան բերեց մի ուրիշ վերմակ ել գյեց նրա դժու

և նորից կողքերը տապտակեց։ Այժմ Սաքուլը վոտով՝
դիմով կորած եր վերմակների տակ։ Նատոն լվացքը
մոռացած՝ առժամանակ նստած մնաց մարդու մոտ։
Կարճ, թախծալից լոռությունից հետո վերմակների
ծայրերը յետ քաշեց մարդու յերեսից և չչնջաց։

— Սաքուլ։

Սաքուլն աչքերը բաց արեց և նայեց նրան հար-
ցական հայացքով։

— Բա չգնացի՞ր հիվանդանոց։

— Գնացի։

— Ի՞նչ ասացին։

— Տասը շայի յեն ուղում։

— Բա՛ ասում են՝ ով չունի, չեն ուղում։

— Ասեցին պոլիցիցը ան տերտերիցը թուղթ բեր,
վոր չունես։

— Յետո զնացի՞ր պոլիցեն։

— Աև գրողը տեսնի պոլիցի յերեսը. նրանց
«զավթրի» գլուխն ո՞վ ունի։

— Դե տերտերի մոտ կգնայիր։

— Տերտերի հերն ել ընտեղ անիծեմ։ Նոր չե՞ր,
վոր տեսա մեյդանումը փորը ցցած։ Տաս շային ի՞նչ
ա, ասում ա, ջահել մարդ ես, մի որ վոր բանես, ա-
սում ա, տաս շայի չե, իրեք մանեթ ել կվեկալնես։
Ախր, տեր հայր, ասում եմ, ջանս չի դալիս։ Լավ.
Լավ, ասում ա, հանաք եմ անում. կիրակի որը ժամ
արի, ասում ա, կտամ։

— Ա՛յ, նրա ջանը դուրս գա, — սրտով բացական-
չեց նատոն։ — Եղ հալով մինչեւ կիրակի վո՞նց մուլափ
տաս։ Քելեխ ըլեր, ձեռաց վո՞նց վազ կտար։

Ու լոեց դաղված սրտով։ Յեվ յերկար ժամանակ
անասելի վշտով նայում եր մարդու մաշված, դեղնած
դեմքին, վորի վրա հիվանդությունը մեռելային ան-
զդայություն եր դրոշմել։ Յերեք ամբողջ տարի յե,
վոր այդ անհասկանալի հիվանդությունը որ որի վրա

հալում, մաշում ե Սաքուլին։ Ել դեղ չմնաց, վոր
փորը չածեց, ել հեքիմ չմնաց, վորին չդիմեց։ Որեր
ու շաբաթներ խաչերի դռանն անցկացրին, մատաղ-
ներ մորթեցին, կարմիր ու սպիտակ հագցրին, բայց
և այնպես վոչի՞նչ, վոչի՞նչ չոգնեց։ Ընդհակառակը՝
Սաքուլն որ որի վրա վատացավ, հիվանդությունն
ավելի խոր բնակալեց։ Սկզբներում ելի քիչ ու միչ
կարողանում եր բանել, բայց վերջին ժամանակներն
ուրագը մի քանի անգամ վրա անելուց հետո շունչը
կտրվում եր և սիրտն այնպես արագ բաբախում,
վոր կարծում եր, թե դուրս պիտի պրծնի բերնից։
Այդ յերեք տարվա ընթացքում նրանք քանդվեցին քարը
քսվեցին. տանն ել վոսկեղեն ու արծաթեղեն չմնաց
դրավ դրին, ժամանակին չկարողացան թափել կորց-
րին, ավելորդ բաները ծախեցին-ծախծինեցին, հետո
որաբաքերի մեջ թաղվեցին և այսոր, յերբ յերթեեկ
հիվանդների քաղաքային բուժարանում կանոնավոր
դեղ ու դարման անելու համար «տաս շայի» յեն ու-
ղում, — չկա։

— Նատոն մի ծանր թառանչ քաշեց։

— Սաքուլ, — չնջաց նորից։

Սաքուլն աչքերը բաց արեց։

— Սոված չե՞ս։

— Չե։

— Ախր վոչ յերեկ, վոչ եսոր զատ չես առել բե-
րանդ, մի բան ելա կեր, վոր ուժ ունենաս։ Հեղնա-
րանք մատաղ են բերել, քեզ հըմար եմ պահել, վեր
կաց կե։ Ազին ել հրես փոնիցը հացերը կրերի։

— Վոր չեմ ուղում, ի՞նչ ուտեմ։

— Հաջաթ չի, զորով կե։ Թե չե, բերանդ ըտենց
հուպ տված խո ջլիս հալից կընկնես։ Վեր կաց։

— ԵԵ՛Կ, նեղորտությամբ արտասանեց Սաքուլը և
աչքերը նորից փակեց։

Նատոն կրկին հառաչեց և կարճ ժամանակ նստած
եր լուռ ու վշտահար մտածմունքի մեջ։

— Հա՛, Սաքուլ ջան, — հանկարծ ասաց նա, ըստ

յերևույթին, միքան հիշելով:—Առավոտն ուզում եյի
պատմեմ քեզ, վեր կենամ տեսնեմ զնացել ես: Գիշերս
ախր մի զարմանալի յերազ տեսա: Մթամ թե դու ը-
տենց թախտի վրա պառկած ես, մեկ ել տեսնեմ մի
կարմիր ձիավոր թուրը ձեռին նի ընկավ ու վրա պըր-
ծավ քեզ: «Ի՞նչ ես պառկել, ասում ա, ընչի՞ չես գա-
լի: Ես սրհաթիս թրովս կտամ, ասում ա, կես կանեմ,
թե չես եկել»: Ու թուրը դորթ, վոր վրա չբերեց:
Հա՛, ըտեղ յես զարթեցի: Սիրտո ընենց լքոցն եր
ընկել, վոր կարծում եյի դորթ եր: Հըմի, Սաքուլ
ջան, ասում եմ, ազին վոր գա, բացանողի մոտ դրո-
կենք: Յես ի՞նչ գիտամ, բալի ելի խաչիցն ես ու ոն-
մեղ տեղը քեզ պտի փչացնես դեղերով:

— Տո, ե՞լի խաչ,— վրա բերեց Սաքուլը դառն
հանդիմանությամբ:

— Վո՛ւյ, ըտենց մի ասի, Սաքուլ ջան, խաչը կը-
նեղանա, — ասաց Նատոն վախեցած:— Ղորթ ա, խա-
չերի դուռը շատ ենք ման եկել, համա ի՞նչ կա վոր, եւ
մեկն ել փորձենք: Ախր չես իմանում, ե՛, իմ որումս
ըսենց ափաշկարա տեսած չեմ. կասես ես նըմուտին ել
կանգնած ա աչքիս առաջը ձիուն նստած, թուրը հա-
նած: Հը՞ Սաքուլ ջան, ազին վոր գա, դրկե՞նք:

Սաքուլն արդեն ծածկել եր աչքերը ձանձրացած:
— Ե՛հ, արեք, ինչ ուզում եք, — ասաց նա խորին
անտարբերությամբ:

— Հա՛, Սաքուլ ջան, դրկենք, դրկենք:

Որորոցի յերեխան լաց յեղավ:

Նատոն վեր կացավ, զնաց չոքեց որորոցի մոտ,
նախ սկսեց որորել, հետո վոր տեսավ ձայնը չի
կտրում, ծիծը բերանը դրեց և, մի ձեռքով որորոցը
դրկած, մտախոհության մեջ ընկավ աչքերը մի կետի
հառած:

Դուռը բացվեց: Կապույտ սուփիրի մեջ հացերը
հալակին, տնքտնքալով մտավ ազին—Սաքուլի մայ-
րը, կարճահասակ, չորացած պառավ մի կին, վշտա-

հար, խորչոմած բարի դեմքով: Յետեից մտավ նրա
թոռը—չորս հինգ տարեկան վտիս մի աղջիկ, ձեռ-
ներով յերկու հաց իրար վրա պինդ սեղմած կըծքին:
Հացերից մեկը, տակինը, սահել եր ներքե և սպառ-
նում եր ընկնել: Նա վազելով հասավ թախտին, բարձ-
րացավ վոտների ծայրերի վրա և հացերն ավաս դրեց
թախտի ծայրին:

— Հէ՛ը, հըլա չեր պառկել,— տիսուր քրթմնջաց
պառավը, տեսնելով վորդուն պառկած:— Ասա, վոր
կարում չես, ել խի՞ ես ծեքծքալի դուրս դնում:

Շալակի հացը դրեց թախտի վրա և կամաց դար-
ձավ հարսին.

— Աղջի, քնած ա՞:

— Գիտում չեմ, նոր զարթուն եր,— պատասխա-
նեց Նատոն:

Պառավը մոտեցավ վորդուն և խոնարհվեց նրա
վրա:

— Սաքուլ ջա՞ն:

— Հը՛:

— Քնած չե՞ս:

— Զե:

— Վո՞նց ես:

— Ե՛հ, յես իմ վոնց եմ:

— Տաք-տաք հաց եմ բերել, վե կաց կե:

— Ո՛հ, զահլա տարաք, ե՞լի,— ջղայնոտությամբ
արտասանեց Սաքուլը վերմակների տակից և շուռ յե-
կավ մյուս կողքին:

Պառավը, խորին վշտով համակված, մի կարճ ժա-
մանակ խոնարհված մնաց վորդու վրա, հետո մի ծա-
նըր թառանչ քաշեց, զնաց բաց արեց կապոցը և սկը-
սեց թեժ-թեժ հացերը փոել թախտի վրա, վոր սառ-
չեն: Այժմ սենյակի մեջ տարածվեց տաք-տաք հացե-
րի ախորդելի հոտը:

— Աղջի, բա հիվանդանոց չի զնացե՞լ,— կամաց
հարցրեց հարսին, վորը ծիծ տալը վերջացնելով,
սկսել եր որորել յերեխային:

Նատոն պատմեց, վոր հիվանդանոցում առանց չքավորության վկայականի չեն ընդունել ձրի: Պատմեց և այն, վոր տերտերն ասել եր, թե վկայականը կերակի որը կտա:

—Այ, տափը դնեմ նրա գլուխը, —վրդովված բացականչեց բարի պառավը: —Բա նա հոգի ունի՞: Ես հալին վո՞նց մնա մինչև կերակի, աղջի. ըսոր յերկուշաբթի յա ախր: Հը՞:

—Դե յես ի՞նչ գիտամ, —տիսուր ու հուսահատ պատասխանեց հարսը և որորոցը մի կողմ քաշեց, վորովհետեւ թախտի մի տախտակը խիստ ճռճռում եր նրա տակ: —Աղջի, արի մի որորի, ե՛, լվացքս մնաց, —դարձավ նա աղջկան, վորը թաժա հացից մի կտրած ախորժակով կծոտում եր:

Փոքրիկ աղջիկը բարձրացավ թախտը, ծալապատիկ նստեց որորոցի մոտ և մի ձեռքով սկսեց որորել յերեխային, իսկ մյուսով շարունակում եր կծոտել հացը:

Նատոն իջավ թախտից, մերկ վոտներին հագավ չուստերը, բայց լվացքին դիմելուց առաջ նստեց սկեսոր մոտ և փափսաց նրա ականջին.

—Ազի ջան, արի մի ձեռաց գնա բացանողի մոտ, տենանք ինչ կասի են իմ երազի հըմա, առավոտը վոր քեզ պատմեցի: Այ կտեսնես, թե ո. Գեորգը չըմ են ձիավորը:

—Դե յես ի՞նչ գիտամ, վորդի, —վշտահար արտասանեց պառավը: —Ա. Գեորգն ել են եր, վոր գնացինք, մատաղն ել են եր, վոր մորթեցինք, ճար չըլափու, —մեռնեմ նրա վոտին:

Յեվ պառավը յերկուղածությամբ բռնված, ծանր հառաչեց:

—Զե, ազի ջան, ազի, հոգուդ մեռնեմ, վե կաց հենց հիմիսկեթ գնա, —աղաչեց հարսը: —Այ մի աբասի ունեմ, տամ:

Նատոն դերեխայի գրպանից շտապով հանեց թաշկինակը, յետ արեց ծայրին կապած մի քսան կո-

պեկանոց և տվեց սկեսորը: Պառավը, լուռ ու մտախոռն, դրամը կապեց իր բռնոթոտ, դեղնած թաշկինակի մեջ, դրպանը կոխեց, ծածկեց իր խունացած սեշալը և դուրս գնաց:

Անցավ մոտ յերեք ժամ: Նատոն պարզաջրել եր լվացքը և փոռմ եր փողոցում կապած թոկի վրա, վոր վերադարձավ սկեսուրը:

—Վեր կացա՞վ, աղջի, —հարցրեց պառավը:

—Զե. ընենց լավ քնած ա վոր, —պատասխանեց Նատոն և իր կողմից հարցրեց: —Ծնչի՞ եսքան ուշացար:

Պառավը վրայից վերցրեց շալը և նստեց դռան մոտ գետնից ամրացրած նստարանի վրա:

—Ըսկի ճար ու ճամփա կա՞ր վոր, —ասաց նա: —Ինչքա՞ն մուշտարի ունի քոռացածը, —տունը զրմի փոռմ եր:

—Յանի լավ իմացա՞վ, աղի ջան, —հարցրեց հարսը:

—Ընենց մին-մին յետ ասեց, վոնց վոր մեր տանը նստած ըլեր:

—Ի՞...

—Քու արկը:

Նատոն արագ նստեց սկեսոր կողքին:

—Ի՞նչ ասեց, —հարցրեց նա չափազանց հետաքըրքած:

—Վոր ասեմ, ասում ա, կորուստ ա—կորուստ չի. վոր ասեմ, ասում ա, ճամփորդ ա—ճամփորդ չի: Ես ով-վոր վոր ա, վոչ ըրեխա յա, վոչ ծեր: Ես ի՞նչ ա, ասում ա, առաջն ընկած, ուրագ ա, թե ինչ—չեմ դիտում, համա ի՞նչ արած, ասում ա, վոր խեղճը ձեռումը դվաթ չունի վեկալնի:

—Ի՞ , զո՞րթ, ազի ջան, —բացականչեց Նատոն զարմանքից տարված:

—Են աստոնձը: Ավասուս, ասում ա, ըժում ի՞նչ

լավ աղամորդի յա, ե՛: Ես յե՞րբ ա, ասում ա, հիշանդացել, վոր ըսենց թել ա կտրվել: Հրես ովարդ ըրեսում ա, ելի՛, ասում ա. ունեցած-չունեցածը գեղ ու դարմանի յա տվել, համա զատ չի դառել: Ես ո՞վքեր են, ասում ա, երկուաը պատիկ են, մեկը-մենձ: Ես մենձը քիրն ա, ասում ա, թե կնիկը, շատ ա դարդ անում: Հրես մեկն ել կա, ասում ա, պառավ ա. սաել ա, ասում ա, շատ տարակուսած: Դե ես ել դույն, ե՛լի, ասում ա, ի՞նչ ես շատ զահլա տանում:

— Վույ զո՞րթ, ազի ջան,— բացականչեց Նատոն, վորի աչքերը վառվում եյին ծայրահեղ զարմանքով և հիասքանչումով:

— Ղորթս վո՞րն ա, աղջի: Ասում ա ե՛լի, ընենց մին-մին յետ ասեց քոռացածը, վոնց վոր մեր տանը նստած ըլի:

— Բժո՞ւմ:

— Բժում... Ես ի՞նչ ա, ասում ա, ձիավոր ա, թե թևավոր, համա հողեղեն չի: Հրես-հրես ասում ա, պոնկներից կրակ ա թափվում, կասես թոնիր ըլի: Դե խաչ ա, ե՛լի, ասում ա. յես խո իմաստում չեմ, ասում ա, վոր ամեն բան դրուստ իմանամ: Ո՞ւմ համբուրող ա, ասում ա, ս. Սարգսի՞ թե ս. Գեորգի, ուխտ պտի զնա: Դե ուրիշ ի՞նչ ասեմ, ասում ա, ես ա, ելի՛:

— Վույ մեռնեմ ս. Սարգսի ել, ս. Գեորգի ել ողորմութենին,— արտասանեց Նատոն և, աչքերը յերկինք զցած, ջերմեռանդությամբ խաչակնքեց յերեսը:— Տեսա՞ր, երազս դորթ դուրս եկավ: Քոռանամ յես, անցկացած տարին դոխտուրների յետեից ընկանք, չդնացինք թելեթ ու հըմի տեսնում ե՞ս...

— Հա՛, ես ել ասեց,—ընդհատեց նրան պառավը, մտաբերելով բացանողի պատվերը:— իրեք որ ու գիշեր, ասում ա, պտի պառկած մնա խաչի տակը: ո-ձորքը յերկինքը պտի ըլի, ասում ա, կողենքը-գետինքը, չունքի, ասում ա, հրեղեն-թևավոր ձիավորը թռչում ա յերկնքի ու գետնքի մեջտեղը:

Նատոն նորից ու ավելի ջերմեռանդությամբ խաչակնքեց յերեսը և ասաց վճռական կերպով.

— Յես ես ա մում եմ յետ զնում թելեթի ս. Գեղորդի հմար, մեռնեմ նրա սուրբ զորութենին:

Նա վեր կացավ, շտապելով փոեց լվացքի վերջին կտորները և ներս գնաց սենյակը: Սկսուրը հետեւց նրան:

Նատոն չուստերը թողեց ցեխոտ հատակին, բարձրացավ թախտը, պատի մեջ գտնված պահարանից հանեց յերկու դեղին մեղրամոմ, զգուշութեն, վորակեավի թախտի տախտակները չճռմառան վոտի տակ, մոտեցավ քնած ամուսնուն, մոմերը պտույտ տվեց նրա գլխի վերեր, հետո նույն զգույշ քայլերով իջավ, հագավ չուստերը և մոմերը տարավ դրեց բուխարու գըլթին, ուր յերեսում եյին ամեն շաբաթ գիշեր վառվող մոմերի սեացած հետքերը:

Հիվանդը տնքաց և շարժվեց վերմակների տակ: Պառավը մոտեցավ նրան:

— Սաքո՞ւլ:

— Հը՛:

— Զարթուն ե՞ս:

— Հա:

— Գնացի ախր բացանողի մոտ:

Սաքուլը վերմակների ծայրերը յետ քաշեց յերեսից և հետաքրքրությամբ նայեց մոր աչքերին:

— Հա-ա՞: Ի՞նչ ասեց:

Նրա կարմրատակած թաց յերեսից և տենդոտ, պլալող աչքերից յերեսում եր, վոր քնի մեջ կազդուրիչ քրտինք եր յեկել:

— Վո՞ւյ, եղ ի՞նչ լավ ա ըլել, Սաքուլ ջան, հրետքութինք ա եկել, — մոտ վազելով բացականչեց Նատոն ուրախացած և, իսկույն իր գլխի սպիտակ աղլուխն առնելով, սրբեց ամուսնու յերեսի քրտինքը:— Բաց ըլես, Սաքուլ ջան, բաց չըլես, — ավելացրեց նա և

սկսեց տապտըպել վերմակների ծայրերը նրա շուրջ—
ջը:— Ընենց լավ իմացել ա, Սաքուլ ջան, վոր ար-
մացք: Աղի ջան, մի պատմի, ե՛:

Պառավը ծալապատիկ նստեց վորդու մոտ և սկսեց
ավելի մանրամասնորեն պատմել բացանողի գուշա-
կությունները:

Նատոն նստել եր մարդու վոտների մոտ և շարու-
նակ նայում եր նրա դեմքին՝ կարծես ստուգելու հա-
մար, թե բացանողի ճիշտ գուշակությունն արդյոք
նրա՞ն ևս նույն զարմանքն ու հիացքն ե պատճառում,
ինչ վոր իրեն:

Սաքուլը լսում եր լուռ և, ըստ յերեսույթին, ան-
տարբեր. միայն չորացած շրթունքներն եր լպսում:

Փոքրիկ աղջիկը մի վոտով որորում եր որորոցը
և տիկին եր խաղում: Այդ տիկնիկն ինքն եր չինել. մի
տափակ կոճակի վրա սպիտակ փալաս եր փաթաթել,
կոճակը կարի սև թելով կապկակել եր մի փոքրիկ
փայտի ծայրին, փայտին հաղցրել եր դերիայի պես
իր ձեռքով կարած մի փոքրիկ տոպրակ, և տիկնիկը
կազմ ու պատրաստ խաղում եր նրա ձեռքին: Նրա
տիկնախաղն ել պարզ եր, ինչպես իր տիկնիկը, շրթ-
թունքներով ճզճզացնում եր պարերգի պես մի բան և
ձեռքերով պար եր ածում տիկնիկը թախտի վրա:

— Հըմի ի՞նչ ես ասում, վորդի ջան, գնում ե՞նք
թելեթ, թե չե, — հարցրեց պառավը պատմությունը
վերջացնելուց հետո:

— Ընչով գնանք, ե՛, — ասաց Սաքուլը: — Տառ
շայի չունեմ, վոր հիվանդանոցումը տամ, թելեթ
վո՞նց գնանք: Ելի քիչ-քիչ մի երկու թումանը հերիք
չի:

— Ի՛, Սաքուլ ջան, ըտենց մի ասի, խաչը կնե-
ղանա: Երկու թումանն ի՞նչ ա, վոր չես կարա մեկից
ճարի: Կղնաս աստծու ողորմութենով կավանաս,
կղաս կրանես, պարտք երկու չարթումը կտաս:

Սաքուլը յերկար ժամանակ չեր համաձայնում նոր
պարտք անելու, քանի վոր արդեն բավական հին պարտ-

քեր ուներ վճարելու: Բացի դրանից, նրա վիճակը
տեսնելով, ո՞վ եր գդվել պարտք տալու նրան:

— Տունդ գրավ դի, գլուխը քարը, տունը ջանիցդ
յու լավ չի՝ ասաց նատոն:

— Դու ել բան ասացիր, — նկատեց Սաքուլը ջղայ-
նացած: — Բաւքի չլավացա, մեռա, ընչով ե՞ք թափե-
լու: Հաց շատ կճարեք, ա՛յ, ուտելու, վոր տան քրեհ
ել քաշեք: Ես մի քնձոռոտ տունն ա ելի՛, թողեք ես ել
տ մնա ձեղ, վոր քուչումը չմնաք:

— Ե՛հ, ընչե՞ր ես ասում, Սաքուլ ջան, վորդի
ջան, — բացականչեց պառավը մեղմ կշտամբանքով: —
Եղ ի՞նչ ասելու բաներ են, վոր ասում ես: Մի
քիչ ել մեզ խեղճ արի, ե՛, սիրտներս կըակ ես գցում,
փթոթում:

Յեկ պառավի բարի, վշտահար աչքերը թաց յե-
ղան:

— Դա ըսկի ասոված ունի՞ վոր, — բեկբեկ ճայնով
արտասանեց նատոն և գլխի աղլուխի ծայրը սեղմեց
աչքերին:

Մի ըսպե սենյակում ճնշող լուռթյուն տիրեց:
Լոել եր նույնիսկ փոքրիկ աղջիկը և, տիկնիկը գոգին
դրած, յերեխայական հետաքրքրությամբ նայում եր
տատին, մորը, հորը:

— Լավ, ես մեկն ել թող ձեր ասածն ըլի, — վեր-
ջապես համաձայնեց Սաքուլը, վոր ինքն ես զգացել
եր իր վերջին խոսքերի ծանրությունը:

Յերեկոյան դեմ նա գնաց իրեն լավ ծանոթ մի
կապալառուի մոտ, վորն ամբողջ քաղաքի հյուսների,
վորմնադիրների և մշակների շրջանում հայտնի յեր
Սերգեյ Ստեփանիչ, կամ պարզապես աղա Սերգո ա-
նունով:

Սերգեյ Ստեփանիչը, — խոշոր արտաքինով, խոշոր
քենակով մոտ հիսուն տարեկան մի տղամարդ, սև ատ-

լասի արխալուղով, վորի վրա հուրհրատին եր տալիս
ժամացույցի վոսկի հաստ շղթան,— նստած եր մի նոր
հսկայական շինության բակում իրար վրա դարսած
հաստ տախտակների վրա, արխալուղի վրայից հազած
ամառվա վերաբկուի փեշերը գոգին հավաքած, և
«տեր-վողորմյան» ձեռքին՝ դիտում եր որվա վերջին
աշխատանքները։ Տանյալ վարպետներ և մշակներ
դժվարության կիսաշեն պատերի գլխին, տախտակա-
մածների վրա բակի մեջ, ցեմենտի տակառների, ա-
վազի, հողի, ցեխի, գաջի ու կրի կույտերի և բուր-
դեր կազմած աղյուսների չուրջը։ Մի շատ բարձր
պատի գլխին վորմնադիրներից մեկը—մի պարսիկ—
փափախը գլխին, մայր մտնող արևի կարմիր ճաճանչ-
ներով վողողված, համ շարում եր պատը, համ կրյ-
կլացնում մի բայաթի շատ ախորժալուր տենորով։

— Ուստա Սաքուլ, — բացականչեց Սերգեյ Ստե-
փանիչը։ — Տո, եղ ի՞նչ ա հալդ. ելի հիվանդ ե՞ս։

— Հա, աղա ջան։

— Տնաշեն, բա վո՞նց չլավացար մինչև հըմի։ Բո-
կի դեղմեղ անում ե՞ս։

— Բնչոր ունեյի, դիմ դեղի ու համի տվի ու,
յես ի՞նչ գիտամ։ Ես անտեր ցավը մտել ա ջանսո-
դուրս չե գալիս։

— Բա ըսկի չե՞ս բանում։

— Թե վոր լավ եմ ըլում, ընչի՞ չե, մինմին բա-
նում եմ, համա դե մինմին բանելով ի՞նչ կըլի։ Մի
ուռւն ողլուշաղ պահելը դժար ա, աղա։

— Այ, թե ուզում ես, բան շատ ունեմ, ըստեղ
ել, ուրիշ տեղ ել, արի բանի։

— Ուզում եմ, վո՞նց չեմ ուզում, աղա։ այ,
սրանց վոր տեսնում եմ (Սաքուլը ձեռքով ցույց տվակ-
չուրջը), ջանս կրակ ա ընկնում, համա վոր ես անտեր
ձեռներումս հարաքաթ չկա։

— Բա ընչի՞ յես յեկել։

— Եկել եմ, վոր… կմկմաց Սաքուլն աչքերը
վայր թողնելով և չվերջացրեց։

— Վոր ելի վող ուզես, չե՞։

— Հա, աղա ջան, — արտասանեց Սաքուլը խեղձ-
խեղձ նայելով նրան։

— Բա են առաջվա տասը մանեթը։

— Դե են առաջվա տասը մանեթն ել… դե, ի-
հարկե, — նորից կմկմաց Սաքուլը և ավելացրեց — թե
վոր…

— Ի՞նչ թե վոր։

— Թե վոր… յես ի՞նչ գիտամ, գրավ կուզես…

— Ի՞նչ գրավ։

— Դե գիտաս ելի, աղա ջան, մի ուռւն ունեմ…

— Տո՛ւն ել ասում ա։ — Սերգեյ Ստեփանիչն ան-
կեղծ զվարճությամբ ծիծաղեց, կայտառ պատանու
պէս վեր թռավ տեղից և ձեռքով թափ տվավ քամա-
կը։ — Տո, տանդ վոր մի քացի տամ, չուռ կգա։ Բան
ունես, բան ասա։

— Դե, ի՞նչ ասեմ, աղա, եղ ա, ինչոր ունեմ։
Ուզում ես՝ առ, չես ուզում՝ ասա գնա Քուռն ընկի։
Ուրիշ ճար չունեմ, աղա։

Սերգեյ Ստեփանիչը նորից ծիծաղեց։

— Վա՛յ, խե՞ղձ իմ Սաքուլ, ի՞նչ լավ մարդ ես, —
ասաց բարեսրտությամբ խփելով նրա ուսին։ — Դու
ինձ ես ասա, ե՞լի ինչքան ես ուզում։

— Ելի վոր մի քսան մանեթ տաս, աղա…

— Քսա՞ն մանեթ, տո, քսան մանեթն ի՞նչ ա.
քսան մանեթին մեկ փչեցի — հանգավ — շարունակեց
ծիծաղելով Սերգեյ Ստեփանիչը։

— Դե, հաս քսան մանեթ ել հերիք ա, աղա' — նրա
խոսքերից որտապնդված ասաց Սաքուլը, — ու թե վոր
վերջը…

Սերգեյ Ստեփանիչը հանկարծ լուրջ դեմք ընդու-
նեց։

— Ե՛, եղ չըլավ, եղ չըլավ, ուստա Սաքուլ, —
շտապեց ընդհատել նրան։ — Քսան մանեթն ել վոր
տալիս եմ, Սաքուլ ջան, հոգուս խաթեր եմ տալիս,

չունքի լավ մարդ ես, լավ ուստա յես, ինձ հըմար շատ ես բանել, համ ել խմող չես:

— Աստված քեզ յերկար կյանք տա, աղա ջան:
Յես ել քու հացը շատ եմ կերել, չնորհակալ եմ. դե
ի՞նչ ասեմ, աղա ջան, թե վոր լավացա, չմեռա. Են յես
գիտամ ելի:

— Դե, հըմի մի քիչ սպասի, հրես շաբաշ կանեն,
կզնանք ինձ մոտ մի վեքսիլ կդրենք յառաւն մա-
նեթի, — են առաջվա տասը մանեթն ել հետն եմ ա-
սում, — ու վերջը, յերբ վոր կլավանաս, կամ փողը
կտաս, կամ փողի տեղ կբանես։ Հը, լավ չեմ ա-
սո՞մ, — հարցըեց Սերգեյ Ստեփանիչը, տեսնելով,
վոր Սաքուլը, վեքսիլի անունը լսելով՝ մի քիչ մտա-
տանջության մէջ ընկավ։

— Դե վոնցոր ուղարմ ես, աղա ջան. — ասաց Սա-
քույն ականջի յետեր քորելով:

— Զե, զո՞ւ վոնց ես ուզում։ Վեքսիլ նրա հըմաք
եմ ասում, վոր տան գրավը դալմաղալ բան ա—ել նա-
տարիում, ել կուպչի, ել պոշինի, — որեր կքաշի,
համ ել անմեղ տեղը ծախսերը կդնա։

— կավ, թող վեքսիլ ըլի, — համաձայնեց Սաքու-
լի:

三

Հետեւյալ որն ևեթ Նատոն մի քանի արշին սպի-
տակ միտկալ գնեց, շապիկ կարեց և հաղբը Սաքու-
լին արխալուղի վրայից, իսկ մի քանի որից հետո
«թելեժկեն» բարձած, իրենք ել յերեխաներով վրեն
նստած՝ առավոտյան վաղ բռնեցին Թելեթի ճանա-
պարհը: «Թելեժկի» յետեր վոտներից պինդ կապկա-
պած՝ պառկած եր մատաղացու վոչխարը և գլուխը
դրած «թելեժկի» ճոճուացող տախտակներին՝ իր վոչ-
խարամիտ հայացքով նայում եր յետեւից յերկար ո՛-
մեկ ճգմող արևակեզ փոշոտ խճուղուն:

Յերկար, քարքարոտ ճանապարհը, «թելեժկի» տատանումը, տոթյեղանակը բոլորովին ուժասպառ արին

Սաքուլին, այնպես վոր յերբ, ճաշի դեմ, թելեթ հասան, մոր և կնոջ ոպնությամբ հաղիվ կարողացավ իջնել «թելեժկից» և վոտները քաշ տալով, գնաց նըստեց հսկայական ընկուղենու տակ յերկայն նստարանի ծայրին:

Նույն ընկուտվենու ընդարձակ հովանու տակ քառակուսի տախտակամածի վրա հավաքված եյին զուգված-զարդարված մի խումբ տիկիններ, որիորներ և դպրոցական տղաներ ու աղջիկներ թիֆլիսեցի հարուստ բազագների, բախկալների ու դինեվաճառների ընտանիքներից, վորոնք ծառաներով ու աղախիններով յեկել բռնել եյին վանքի ամենալավ սենյակները վոչ այնքան իրեւ ուխտավոր, վորքան իրեն ամառող: Նույն տեղը առանձնակի նստած եյին իրարկողքի գյուղի յերկու քահանաները, ամեն մեկի ձեռքին մի հովանոց, և աչքերը քաղցած գայլերի պես տնկել եյին դեպի ուխտավորների բնակարանների յերկայն պատշգամբը, վորտեղ աղախինները և ծառաները սուրճի պատրաստություններ եյին տեսնում սպիտակ սովորգներով ծածկված սեղանների վրա:

Վանահայրը — խոզ կտրած մի վարդապետ կապա-
յով և թասակը գլխին — իր բնակարանի պատշգամ-
բում, զանգակատան տակ, նարդի յեր խաղում ուխ-
տավոր ընտանիքներից մեկին պատկանող մի յերիտա-
ռարդի հետ:

— Դուք գնացեք համբուրեցեք, մինչև յես տեղաշորը կցցեմ ու բարզն ել տուն կածեմ, —ասաց Եատոն սկեսուրին ու ամուսնուն:

Պառավն առավ Սաքուլի թեր, մտան յեկեղեցի, բամ վառեցին, համբուրեցին, ծունը դրին, աղոթք սրին, դարձյալ համբուրեցին, «պահպանիչ» ասել ովին քահանաներից մեկին, վորը շտապել եր ներս տնել յեկեղեցի նրանց յետեից: Այդ բոլորը տեսեց սյնքան յերկար, վոր յերբ դուրս յեկան, Նատոն, ացանողի պատվերի համաձայն, արդեն անկողին եր պատրաստել յեկեղեցու պատի տակ, յետեի կողմը և



Հետները բերած իրեղենները թափել եյին դատարկ
սենյակներից մեկում։ Ծծի յերեխան լաց եր լինում
փոքրիկ աղջկա գոգին, վորը որորելով և «ուս-սը»
անելով ապարդյուն աշխատում եր լոեցնել նրան։

Յեկեղեցուց գուրս դալուն պէս Սաքուլը պառկեց
անկողնում։

Մայրը թողեց նրան և դնաց հարսին ոգնելու,
վոր սենյակը կարգի դնեն։ Սենյակը խոնավ և աղտոտ
եր։

Այդ և հետեյալ որը գիշեր-ցերեկ Սաքուլը պառ-
կած եր անկողնում յեկեղեցու պատի տակ։ Գիշերները
նրա մոտ նստած հոկում եր մայրը համարյա անքուն։
Բարեբախտաբար այդ յերկու որը յեղանակը լավ եր,
և Սաքուլը բավական լավ եր զգում իրեն։ Յերբորդ
որը առավոտյան մատաղը մորթեցին։ Ամենալավ
կտորները և մորթին տարան վահահայրը, տերտերնե-
րը, տիրացուն և ժամկոչը, մնացածից շատը բաժանե-
ցին հարեան ովատավորներին, իսկ մսաջուրը տարան
գյուղի բոկոտն յերեխանները և կանայք, վոր հավաք-
վել եյին հազար ու մի տեսակ ամաններ ձեռքներին։

Որը տոթ եր, շունչ քաշել չեր լինում։ Յերեկո-
յան դեմ յերկինքը թխալեց, արագորեն սեացավ,
հրեղեն կայծակներն սկսեցին պատռել ամպերի կուրծ-
քը նախ հետավոր ու խոտլ, հետո ավելի ու ավելի մո-
տեցող և ուժգին վորոտումներով։ ողը սկսեց շարժվել
և ցրտել. հետո հանկարծ այնպիսի մի ուժգին փոթո-
րիկ բարձրացավ շրխկոցով ու թրխկոցով, վոր յեր-
կինք ու յերկիր խառնվեցին իրար փոշով ու աղբով։
Մի ինչ-վոր ցուրտ բան, կլորիկ ու պատիկ, հրացա-
նի կոտորակի պէս թրխկաց Սաքուլի յերեսին, վոր
վերմակի տակ պառկած դիտում եր մոլեղնած բնու-
թյան այդ արհավիրը։ Մի կոտորակին հետեւց յերկ-
րորդը, յերրորդը... ավելի ու ավելի հաճախ ու
խոշոր։ Սաքուլը շտապեց շուռ գալ կողքի և գլուխը
ծածկեց վերմակի տակ։ Նույն բոպեյին զգաց, վոր
կարկտախառն անձրեվը թակում ե վերմակը։ Նատոն

ձեռաց վազացը մի մեծ կապերտ և ձգեց նրա վրա։
Պառավն ել մի յերկու տոպլրակ բերեց և ձգեց կապեր-
տի վրա։

Սաքուլը կուչ եր յեկել այդ ծանրության տակ,
ճնշվելով ողի պակասությունից, և ականջ եր գնում,
թե ինչպես կարկտախառն հորդառատ անձրեվ շփշփո-
ցով թակում եր տոպլրակներն ու կապերտը, թե
ինչպես յերկինքը գոռոտուում եր ահեղազոչ վորո-
տումներով համարյա թե անընդհատ, թե ինչպես հո-
ռաչում ու շառաչում եյին ընկուտենին և մյուս ծա-
ռերը փոթորկի ուժգին թափահարումներից։ Նա զգաց,
թե ինչպես անձրեկ ջրից գոյացած մի առվակ ծլլալեն
ներս խուժեց բարձի վրայով, անախորժ սառնու-
թյամբ սողաց ականջի մոտով և սկսեց գուր կապե-
տակը, ծծվելով ներքնակի մեջ։ Առվակներ եյին, վոր
վազում եյին անկողնի կողքերից։

Կինն ու մայրը, հորդահոս անձրեկ տակ թրջվե-
լով, շփոթված, չեյին իմանում ինչ անեն։ Բացանո-
ղը պատվիրել եր, վոր, հիվանդը յերեք որ ու գիշեր
պետք ե պառկած մնա խաչի տակ բացոթյա, մինչդեռ
յերեք որ ու գիշերը դեռ չեր լրացել, իսկ հիվանդին
այդ հորդահոս անձրեկ տակ թողնել անկարելի յեր։

— Աղջի, վեր առնենք տուն տանենք, — ասում եր
պառավը։

— Բա վոր իրեք որը չի թամամել, — առարկում
եր նատոն։

— Աղջի, բա ես անձրել չես տեսնո՞ւմ։

— Դե ասում եմ, վորտեղ վոր ա՝ կը կտրի։

— Վո՞րդիան կը կտրի, աղջի, տես, ե՛, վոնց ա
հուրհատում։

Հիրավի, անձրել կարծես միտք չուներ կտրվելու։
Այժմ կարկուան ել անձրեկ յեր փոխվել և ջրերը
թափում եյին այնքան հորդ ու առատ՝ վոր նրանց
թանձրության մեջ յերկինքի փայլատակումները հաղիվ
եյին լուսավորում մթագնած յերկիրը։ Յերկնքի հա-

մարյա անընդհատ վորոտի ձայները, անձրեսի շիշփոցը, մոտակա ձորակի միջով վազող ջրերի քչքչոցը և ծառերի շառաչը միախառնվերով՝ այնպիսի մի ժխորեյին բարձրացրել, վոր իրար մոտ կանդնած հարս ու սկեսուր հազիվ եյին լսում իրար ձայնը:

Սաքուլը, անկողնի մեջ կուչ յեկած, զգում եր, թե ինչպես այս ու այն կողմից ներս ծորացող առվակները շատանում են և վերմակն անձրեսի ջրերից թրչված տոպրակներից ու կապերտից հետզհետե խոնավանալով ճնշում եր իր վտիտ մարմինը: Ոդ չկար, վոր չնչեր և չնչածն ել բաղանիքի տաք գոլորշու պես մի բան եր, վորից քիչ եր մնում խեղղվեր: Տեսնելով, վոր այլես չի կարողանում դիմանալ, վրայի ծանրությունը մի կողմ շպրտեց և նստեց անկողնում: Այժմ անձրեն սկսեց թակել ուղղակի նրա գլուխն ու մեջքը:

— Տո, բա դուք աստված չունե՞ք. ինձ խո սպանեցիք ըստեղ, — կանչեց նա:

Կինն ու մայրը շտապեցին նրան վերկացնել և հորդահոս անձրեսի տակ մի կերպ տեղափոխեցին սենյակ:

Յերեք որվա ուխտն արդեն կատարված եր, թեև Սաքուլը յերրորդ որվա գիշերը չեր անցկացրել բայց յերկնքի տակ: Չորրորդ որը «թելեժկեն» քաղաքից յեկավ, վոր մեր ուխտավորներին տուն տանի: Սաքուլին սպառկեցրին «թելեժկի» մեջ ուժից բոլորովին ընկած: Ճանապարհին մի գլուխ բղավում եր կողերի մեջ զգացած անտանելի ծակոցներից. դադարում եր բղավելուց այն ժամանակ միայն, յերբ հազը բռնուած եր: Հազում եր չոր ու թույլ, վորի ժամանակ ձայնը կարծես հորից եր դուրս դալիս: Յերբեմն պարզապես չնչասպառ եր լինում: Մայրն ու կինը նստած եյին կողքին և հետները վերցրած դինու շից յերեսին ջուր եյին ցրցամ տալիս, վոր շունչը յետ բերի:

Թախտի վրա, անկողնի մեջ պառկած է Սաքուլը, գլուխը կապած սպիտակ փաթաթանով, վորի տակից դուրս են պրծել յերկարացած մազերը և, քրտնքից ու կեղտից թաղիք դարձած, կպել վոսկրացած քունքերին: Դեմքին մնացել է միայն քիթը խոշոր ու սուր, և աչքերը, ահագին ու պապղուն ապակու պես, նայում են բաց դռնով զեպի դուրս: Այնտեղ ամառվա միջորեյի արել հրաշեկ ճառագայթներով կիզում է դիմացի տան պատը և այն աստիճան չողչողում, վոր ուղիղ նայելիս մարդու աչքերը ցավում են: Ուղղակի դուռն առջև, ստվերի մեջ նստած է փողոցի պառավ շունչ և, կարմիր լեզուն հանած, հեթեթում է տապից: Սաքուլն բարձն ի վեր կիսանստած, անթարթ նայում է դուրս բթացած հայացքով և ծանր շունչ քաշում: Յերկու որ ե, վոր կողերի մեջ այլես ծակծը կոցներ չի զգում. հազն ևս քչացել ե. բայց այնտեղ, ներսը, ինչ-մոր տարրոբինակ դատարկությունը է զգում. կարծես թոքը, սիրտը և ամբողջ փորոտիքը հանել դուրս են թափել:

Անհուն վիշտը ցամաքած դեմքին՝ մայրը նստած է մեռնող վորդու կողքին և թաշկինակով քշում է ճանձերը նրա դեմքից: Նատոն որորոցի մոտ չոքած՝ ծիծ և տալիս յերեխային և հուսահատ հայացքով անթարթ նայում սենյակի պուճախին, վորտեղ աններկ գաջն առատորեն ծծել և գետնի խոնավությունը և տեղ-տեղ թափմել: Նրա հայացքը ցույց է տալիս, վոր նա առաջոց արդեն հաշտվել և անխուսափելի թշվառության հետ: Թախտի վրա, լուսամուտի առջև չոքած է փոքրիկ աղջիկը և աշխատում է բռնել ապակիների վրա պղղացող ճանձերը:

Ծանր ու չարագուշակ լուռեթյունն է տիրում սենյակում և դուրսը: Այդ լուռեթյունը խանգարում է խառ թութ ծախող մի կինտո, վորը թարախը գլխին և կչեռքն ուսին՝ անցնում է դուռն մոտով և իր առողջ

թոքերի ամբողջ թափով աղաղակում։ «Թութա՛,
թութա՛, ախառի թութա՛»։ Նա մի բոպե կանդ ե առ-
նում բաց դռան առջեւ, նայում ե ներս, իր թավ ձայ-
նով հարցնում՝ «խառը թութ չեք ուզո՞ւմ» և, տես-
նելով, վոր պատասխան չի ստանում, շարունակում ե
ճանապարհը կշեռքը շրիկը խացնելով և փողոցն
աղմկելով իր հուժկու կանչով։ Ու կյանքի առորյան
հիշեցնող այդ կանչը, մի բոպե վանելով մահվան ուր-
վականը, լսվում ե մի առժամանակ ես, մինչև վոր
հետզհետեւ խանալով լոռում ե վերջապես, և մահվան
ուրվականը նորից գալիս ե իր փափսուկը տարածելու
մեռնողի սենյակում առաջվանից ավելի ծանր ու չա-
րգուշակ լուռթյան մեջ։

Հիվանդն այժմ պառկած ե աչքերը փակ, և յեթե
ծանր հեվքը չլինի, տեսնողը կկարծի, թե մեռած ե։
Պառավ մայրն անհանդստացած աչքը չի հեռացնում
նրա դեմքից։ Նրա գլուխը սաստիկ շարժվում ե։ ըստ
յերեսութին, ուզում ե ինչ վոր ասել, բայց չի հա-
մարձակվում։ Վերջապես զաղարում ե ճանճերը քշե-
լուց ե, խոնարհվելով վորդու դեմքի վրա, շնչում է
անհամարձակութեն։

— Սաքուլ ջա՞ն...

Սաքուլ կամաց բաց ե անում աչքերը և նայում
նրան։

— Ի՞նչ կը ի, վոր տերտերին խմաց տանք։

— Տո, ելի տերտե՞ր, — բացականչեց Սաքուլը
զայրութիւ այնպիսի հանկարծական բռնկումով, վոր
մայրն ել, կինն ել ապշեցին, թե վո՞րտեղից նա, վո-
րի ձայնը մինչև այժմ հազիվ եր լսվում, հանկարծ
այլպիսի մի ուժ հավաքեց իր մեջ։ — Տո, ձեր տեր-
տերն ու խաչը չե՞ր վոր ինձ եստեղը հասցըին... ել
ի՞նչ եք ուզում ինձանից... թողեք, ե՞լի, հանդիսա-
հողիս տամ...»

Նրա ձայնը հանկարծ կտրվեց, աչքերը լցվեցին
արտասուքով, և նա այլևս վոչինչ չկարողացավ ար-
տասանել։

— Դե յես ինչ գիտամ, վորդի ջան, ասում եմ
քալի... — արտասանեց մայրը կսկծալից և առանց
խոսքը վերջացնելու լոեց, վորպեսզի այլևս չգրգռի
վորդուն։

Ու առ ժամանակ խանդարված չարագուշակ ծանր
լուռթյունը դալիս ե նորից թագավորելու մեռնողի
սենյակում։

Սաքուլը կամաց-կամաց հանգստանում ե և մտա-
պու հայացքը տնկում դիմացի տան արեակեզ պա-
տին։ Յերկար լուռթյունից հետո նրա չրթունքները
շարժվում են. ինչ-վոր բան ե ասում, բայց դժվար
ե լինում վորոշել արտասանածը։

— Ի՞նչ, Սաքուլ ջան, — հարցնում ե մայրը, խո-
նարհվելով նրա դեմքին։

Նատոն, վոր գեռես շարունակում ե ծիծ տալ յե-
րեխային, դեմքը դարձնում ե դեպի նա և ականջը
սրում։

— Ասում եմ վոթրագչիկ Սերգոն, — շնջում ե
մեռնողը, ամեն մի խոսքի վրա հազիվ շունչը յետ-
րերելով, — են, վոր իրեք թուման եմ պարտ... վիս
մարդ չի... կը լի, վոր չուզի... Համա թե ուզի...
յաբազ տվեք... թե հերիք չանի... քամարս ծա-
խցեք... հոդիս չծանրացնեք...»

Խեղճ պառակ մայրը միանդամայն կարկամում ե
և չի իմանում ինչ ասի։

Նատոն զգում ե, թե ինչպես ամուր մի բան
ըստում ե բուկը։ Գլուխը դնում ե որորոցի վրա, վոր
դեմքը ծածկում կռների մեջ և ամեն կերպ աշխա-
տում ե զսպել խեղդող հեծկլտանքը։

Իսկ վոքրիկ աղջիկը շարունակում ե մատները
շարժել լուսամուտի ապակիների վրա, վոր բռնի ճան-
ճերը, և նմանեցնելով կինտոյի կանչին, մեքենայա-
րար կանչում ե կամացուկ՝ «թութա՛, թութա՛, ախա-
ռի՛ թութա՛»։

ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿԵՑԻՆ

Աեծ ու փարթամ քաղաքի ծայրամասերից մեկի թաղը: Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ՝ մուռտիկ փողոցներ, վորոնք նեղլիկ անցքերով դնում խաչաձևում են իրար կամ դեմ առնում մի պատի՝ կուր մուրացկանի պես: Իրար վրա թափված, իրարու հենված տնակներ, վորոնց խարխուլ լարիարները թվում ե թե ամեն բողե պատրաստ են թափվելու անցորդի գլխին: Փոքրիկ պատուհաններ՝ կեսը պակակի, կեսը թղթած, փտած զոները հողածածի տափակ կտուրներ, վորոնք ձմեռը տնքում են ձյունի ծանրության տակ, գարնանը ծածկվում փարթամ կանաչով և անձրւների ժամանակ կաթում, կաթում, կաթում, ստիպելով խեղճու թշվառ բնակիչներին պատրսպարվել ծալքերում, զոների և պատուհանների խոռոչներում, չուլ ու փալասների տակ:

Այսպիսի տնակներից մեկն եր և ջուհակ թորոսի խրճիթը: Սակայն այս խրճիթը մյուս տնակներից տարբերվում եր միայն նրանով, վոր սրա պատերի կեսն ալիզից եր (կավի և հարդի շաղախից) և կրտրանը յերդիկ ուներ, վորի գլուխը ծածկված եր կոտրած կարասի վերին մասով: Այդ յերդիկի տակ եր ջուլհակի դաղգյահը և այդ տեղից եր նա ձմեռը լույս ստանում կտավ գործելիս, վորովհետեւ միակ պատուհանը շատ փոքր եր և դաղգյահից հեռու:

Զուլհակ թորոսը, վոր մի ժամանակ շատ ժիր արհեստավոր եր, նստում եր իր նահապետական դաղգյահի առջև, վոտները կախում հորի մեջ, մաքոքը հինածի միջով աջ ձեռքից ձախն եր դցում, ձախից

աջը, և վաղ առավոտից մինչեւ ուշ գիշեր խրճիթի խոր լոռության մեջ լավում եր ճախարակների միալար ճոճողը: Այժմ ծերացել եր, շատ եր ծերացել. մեջքը կորացել, կուզ եր դարձել, միրուքը սպիտակափառ փովել եր կրծքին, սպիտակ թալ հոնքերը կախվել ելին հանդած աչքերի վրա, ձեռքերը դողդողում ելին և առանց ձեռնափայտի չեր կարողանում ման դալ: Ու չեր հիշում, թե յերբվանից եր, վոր դաղգյահը, կարծես խոր քուն մտած, կանդնած եր յերդիկի տակ իր ցից-ցից սյուներով, առանց հինածի, վորպես մի կմախք. չեր հիշում, թե յերբվանից եր, վոր ջահրան իր ծոված անիվով ընկած եր անկյունում անզործ. չեր հիշում, թե յերբվանից եր, վոր մասրաները փոշեթաթախ ընկած ելին մութ պատի տակ՝ թիթեղյան փոքրիկ լամպի հետ, վոր դիշերները մխում եր դաղգյահի մոտ:

Այն ել չեր հիշում, թե յերբ եր մեռել կինը, թողնելով իր մի քանի զավակներից միայն մի աղջիկ, վոր այժմ մոտ յերեսուն տարեկան եր և իր միակ հույսն ու ապավենը այդ խորին ծերության հասակում: Մարթան եր նրան կերակրում, հագցնում իր ձեռքի աշխատանքով և չեր ամուսնացել միայն նրա համար, վոր ծերունի հայրն անտեր-անտիրական չըմնա: Նրա, ինչպես և համարյա ամբողջ թաղի կանանց, սովորական աշխատանքը հինած գործելն եր, վոր նա վերցնում եր ասիական դերձակներից: Ամբողջ որն աշխատում եր, աշխատում առանց դաղար առնելու: Նրան միշտ կարելի յեր տեսնել կամ դուրսը հարեւդան կանանց պես տակ պատի տակ վիլալարը ձեռքին հինած հինելիս, կամ թել կծկելիս, կամ գուլումփայի վրա թել յետ տալիս և կամ թե տանը, թախտի վրա, դաղգյահի առջև նստած, գուլումփան ու թուրը ձեռքին, հինած գործելիս:

Տարորինակ աղջիկ եր Մարթան: Ծիծաղ, ուրախ տրամադրություն ասած բանը կարծես բնավ ծանոթ չեր նրան. ծանրաբարո, սակավախոս, միշտ զգաստ,

միշտ լուրջ, միշտ կենտրոնացած իր ներքին աշխարհի մեջ, ուր կարծես շարունակ պրատում եր ինչվոր ու չեր գտնում: Դեռևս մոր կենդանության ժամանակ, վոր զարմանալի աստվածավախ կին եր, տարված ամեն տեսակ նախապաշարումներով, նա սովորել եր հավատալ սրբերին, վորոնք այժմ միմի պատամունքի առարկա եյին զարձել նրա համար: Նրա ամենապաշտելի սուրբը ո. Գեորգն եր, ուր ամառամեռ համարյա ամեն շաբաթ յերեկո գնում եր համբուրելու, իսկ ամեն տարի աշնանը, այդ սրբի տոնի շաբթին ծոմ եր պահում—ամբողջ վեց որ վոչ հաց եր առնում բերանը, վոչ ջուր, իսկ յոթերորդ որը հաղորդվում եր: Նույնիսկ մի անդամ ծոմապահությունից այնպես հիվանդացավ, վոր քիչ մնաց մեռներ, բայց և այնպես շարունակում եր իրենը: Մեծ պասը պահում եր ամենայն սրբությամբ, իսկ զատկից մինչև համբարձումը յերկուշաբթի որերը չեր աշխատում, վոր հարինք ցավը չտարածիլի և արտերը կարկտահար չլինեն: Միշտ այդպես եյին արել հայրն ու մայրը, այդպես ել շարունակում եր այժմ ինքը:

Նա հավատում եր դեկտի և սատանաների, ալքերի և քաջքերի գոյության, թալիսմանների և ժողովրդական աղոթքների գորության: Յերազի մեջ տեսած ամեն մի կենդանի կամ առարկա նրա համար վորոշ, տխուր կամ ուրախ, պատահարի գուշակ եր, հոգ չե այդ յերազները բնավ չկատարվեյին:

Դեռևս մանուկ հասակում մորից լսել եր, վոր ամեն մարդու աջ ուսի վրա հրեշտակ կա նստած, ձախ ուսի վրա—սատանա. նրանք շարունակ կովում են իրար հետ. հրեշտակը մարդուն գեղի բարին և մը զում, սատանան—դեպի չարը, ուստի քնելիս պետք է միշտ ձախ ուսի վրա պառկել, վոր սատանան տսկը մնա ջարդվի: Ու Մարթան այդպես ել անում եր միշտ և հաստատ հավատացած եր, վոր դիշերները ձախ ուսի վրա պառկելով սատանային տակն ե գցում ջարդում և դրանով ուրախացնում բարի հրեշտակին:

Գարնան վերջին որերից մեկում մեռավ թորոսնեց հեռում-մոտիկ ազգականներից մեկի թռքախտավոր տղան՝ Դարչո անունով: Մարթային յեկան տարան, վոր ողնի սեեր կարելու սգավորների համար: Յերեք որ ու գիշեր մնաց Մարթան մեռելատանը և տուն գարճավ թաղման որը, արդեն մութն ընկած ժամանակ, յերբ ամենքն արդեն ցրվել եյին: Հայրը նրանից շատ առաջ եր վերադարձել և խրճիթի շեմքին նստած՝ սպասում եր նրան:

Մարթան մտավ, վոր ճրագ վառի և մտնելուն պես այնպիսի մի ճիչ արձակեց, վոր կարծես ոճ խայթեց:

Այդ ճիչն այնքան սարսափելի յեր, վոր ծերունի հայրը համարյա թէ յերիտասարդական կորովով վեր թուավ տեղից և ներս ընկնելուն պես իրեն գտավ աղջկա գրկի մեջ:

— Վա՛յ, հայրիկ ջան, չնե՛րը, կատվանի՛քը, — կանչեց Մարթան սարսափահար, պինդ սեղմելով նըրան իր գրկի մեջ, պաշտպանություն վորոնողի պես:

Հայրը, հազիվ կարողացավ պահել իրեն նրա ծանրության տակ, չոշափեց նրա գլուխը և հարցրեց ծայր աստիճան զարմացած:

— Մարթա ջան, ի՞նչ ես ասում:

— Շները, կատվանիքը, — կրկնեց Մարթան, և հայրն զգաց, վոր նա ամբողջ մարմնով գողում ե:

— Ի՞նչ շուն, ի՞նչ կատու, վորդի ջան:

— Հրեն... միսը քրքրում են...

— Ի՞նչ միս, վո՞րտեղ:

— Հրեն... թախտի տակը, թախտի տակը...

Ծերունին մի կերպ ազատեց իրեն աղջկա ցնցողաբար սեղմող ձեռքերից, մթության մեջ խարիսափելով մոտեցավ սեղանին, վոր ճրագ վառի, բայց թէ ձեռքերն եյին դողում և թէ իրենից պոկ չեկող սարսափահար տղջիկը յեր թողնում, վոր ազատ շարժումներ

դործի: Վերջապես, սեղանի վրա յերկար տապտպելուց հետո, գտավ լուցկու տուփիը և մի կերպ վառեց լամպը: Ու յերբ լույսի վրա նայեց աղջկան, զարմանքից քարացավ: Մարթայի դեմքը սարսափից ծռմռվել, այլանդալվել եր, աչքերը կարծես ուզում եյին դուրս պրծնել թոռոչներից, հայացքն անմիտ եր, յերեսին դույն չկար և ինքն ամբողջովին դողում եր տերեւի պես:

— Մարթա ջան, եղ ի՞նչ ա հալդ, — ակամա բացականչեց ծերունին իր թույլ, դողդոջույն ձայնով, — ինչի՞ յես դողում:

— Շները, հայրիկ ջան, — կատվանիքը... ախր միսը քրքրում են... թախտի տակը, — սարսափած կրկնում եր Մարթան ձեռքով ցույց տալով թախտը:

— Հիսուսին ու քրիստոսին, վորդի ջան, շուն ու կատու չկա ըստեղ, աչքիդ ա երեսում, — խաչակնքեց ծերունին:

Բայց Մարթան շարունակ կրկնում եր իր ասածը և, հորը պինդ կպած, սարսափահար աչքերը չեռացնում թախտից:

Ծերունին մի կերպ ազատվեց նրանից, դողդոյն ձեռքով վերցրեց լամպը, մոտեցավ թախտին, դրեց գետնին, կապերտի փեշը բարձրացրեց և աչք ածեց թախտի տակը:

— Դե դու ել տես, ըստեղ ո՞ւր ա շուն ու կատու, — ասաց նա, դառնալով աղջկան:

Մարթան, առանց տեղից շարժվելու, ձեռքերը դրած ծնկներին, խոնարհվեց, և չուծ աչքերով հեռվից նայեց թախտի տակը, ուր բացի կալի կրակարանից, վոր նրանք ձմեռը քուրառւ տակ եյին բանեցնում, փայտ կոտրելու կացնից և ավելից, ուրիշ բան չկար:

— Չկա՞ — հարցրեց նա կամաց ծոր տալով:

— Բա կա՞ : Վոր ասում եմ աչքիդ ա երեացել...

Ծերունին կապերտի փեշն իջեցրեց, լամպը վերցրեց և տարավ դրավ սեղանի վրա:

— Նստի, բալա ջան, նստի: Մի քիչ սառը ջուր խմի, վախեցած ես:

Նա վերցրեց ջրի թասը, մոտեցավ պատի տակ կիսով չափ գետնի մեջ խրված կարսախն, ջուր հանեց և բերավ դրավ աղջկա առջեւ:

Բայց Մարթան ձեռ ել չտվալ: Այժմ հանգըստացել եր և նստած եր աչքերը մի կետի հառած գլուխը ձեռքերի մեջ առած, կարծես աշխատելով մտքերը հավաքել:

— Մեր թախտի տակը չե, — շնչաց նա յերկար լուռթյունից հետո, — նրանց թախտի տակը... Խալիսը վոր քաշվեց, Դարչոյի մերն ասեց ինձ, վոր մոզումիսը հանեմ թախտի տակիցը, տանեմ գանջնումը պահեմ: Կոտցա, վոր հանեմ, տեսնեմ շնէրն ու կատվանիքը վրա յեն թափել քրքրում... Ընենց վախեցա, վոր... ընենց վախեցա...

— Ի՞նչ մոզու միս, — հարցրեց ծերունին:

— Դարչոյենք վոր պահում ին... Են մատաղացուն, ելի, վոր պըտի տանեյին Բոլնըսի ու Գեվորգում մորթեյին, վոր Դարչոն լավանար:

— Են եյին մորթել քելեխի՞ն:

— Բա' :

— Վա' յ, վա' յ — ասաց ծերունին գլուխը շարժելով: — Յետո դրուստ շուն ու կատվանիք ի՞ն:

— Յես ի՞մ... վախից սիրառ գնացել եր... Ասին, թե վոչինչ չկա, աչքիս ա երեացել...

— Աչքիդ ա երեվացել, բա, աչքիդ, վոնցոր հրմի, — վրա բերեց ծերունին: — Վե կաց, բալա ջան, վե կաց կողենքը դցի, քնենք: Իրեք որ ա չըրչարդել ես, չատ կըլես բեղարած: Հրես իմ քունն ել ա տօնում:

Յեզ ծերունին, բոլորովին հանգստացած, հորանգեց:

Մի քանի որ Մարթայի վարմունքի մեջ մի առանձին տարրորինակ բան չեր նկատվում։ Սովորականի պես առավոտները վաղ վեր եր կենում, փոքրիկ ինքնայեռը գցում, անկողինը հավաքում, թախտն ու հատակն ավլում, ամեն բան իր տեղը դնում ու նըստում հինած գործելու մինչև ինքնայեռի յեռ գալը։ Հետո հոր հետ սուսումիուս թեյ եր խմում ցամաք հացով և նորից գործի նստում մինչև ճաշ և մինչև յերեկո։ Բայց այսուհետեւ հայրը նկատեց, վոր նու մենակ գործի նստած ժամանակ խոսում ե ինքն իրեն, գեմքով ինչ-վոր ծամածություններ ե անում, յերբեմն ծիծաղում առանց վորեվե առիթի, յերբեմն ել սպլարի պես մզկտալով մոմում, լաց լինում։ Մի որ ել ծերունին դրսից ներս գալով տեսավ թախտը մի կողմն ե քաշել ու կացնով քանդում ե գետինը։

— Մարթա՛, եղ ի՞նչ էս անում, — բացականչեց նա զարմացած և վախեցած։

— Հանում եմ . . . հանում եմ, — ասաց Մարթան, կացինն ուժգին թափով զարկելով հողի հատակին։

— Ի՞նչը։

— Մողին . . .

— Ի՞նչ մողի։

— Մատաղացու մողին . . . մատաղացու մողին . . . ո. Գեռորդի մողին . . . քանի վախտ ա մզզում ա . . . բա մեղքը չի՞ . . . բա մեղքը չի՞ . . . բա թողանք, վոր չներն ու կատվանիքը գզգզե՞ն . . .

Ասում եր ու հետով քանդում գետինը շարունակ, հողը ցաքուցրիվ տալով շուրջը։

Ծերունին, տեղն ու տեղը քարացած նայեց, նայեց, հետո մի «վայ» արավ և յերկու ձեռքով թակելով գլուխը՝ շտապեց դեպի դուրս հարեաններին ովնության կանչելու։

Զանցավ մի քանի ըռպե, և արդեն ամբողջ թաղը զընդում եր, թե «Թուրոսանց Մարթան գժվել ա»։ Ել

մեծ, ել փոքր, ել կին, ել աղջիկ —ով ասես, բան ու գործ թողած, շտապում եր թամաշի։ Թորոսենց իրը ճիթի ներսն ու դուրսն ասեղ գցելու տեղ չկար . . . իրար ճխլելով, իրար հրելով, իրար վոտ կոխ տարով ներս եյին խցկվում հա՛ խցկվում խրձիթի նեղ դոնից։ Զայ-ների ժխորը բռնել եր ամբողջ փողոցը։

Մարթան նստած եր իր փորած գետնի վրա և, կացինը ձեռին, խելագարի անմիտ հայացքով նայում եր ներսը ճխտված կանանց և յերեխանների ամբոխին։ Երթունքները շարունակ կրծում եր և գերիայի փեշը փաթաթում մատների վրա, յետ անում ու նորից փաթաթում։ Նստած եր լուռ, բոլորովին ձայն չեր հանում մինչև իսկ այն ժամանակ, յերբ փորձում եյին խոսեցնել։ Մի քանի սրտոտներ փորձեցին կացինն առնել նրա ձեռից և վերկացնել, բայց նա կացինը չեքը կոխեց, ամբողջ մարմնով կռացավ նրա վրա և սկսեց լաց լինել յերեխայի պես, յերբ նրա ձեռքից ուզում են խլել իր խաղալիքը։

Տեղահան արած թախտի ծայրին կծկվել, կուչ Եր յեկել ծերունի հայրը, կուզը ցցել, սպիտակ միրուքը թաղել ծնկների արանքին և մզկտում դառնագին։

Ներսը հավաքված կանայք նայում եյին ծերունուն և նրա աղջկան կանաչարությամբ, կարեկցությամբ և մի տեսակ վախի զգացումով, վոր ակամա պատում ե մարդուն խելագարի հանդեպ։ Յել թեպետ վոչ-վոք տեղից չեր շարժվում, բայց ամեն մեկի մեջ այդ վախի զգացումն այն աստիճան ուժեղ եր, վոր բավական եր Մարթան հանկարծ վեր թռչեր տեղից և վրա պըրծներ, իսկույն ամենքը գլխապատճ դուրս կփախչեյին ճիչ ու ծկլթոցով։

Իսկ այն կանանց մեջ, վորոնք ամբոխվել եյին դուրսը՝ ներսը տեղ չլինելու պատճառով, տեղի եյին ունենում հետեւյալ խոսակցությունները։

— Աղջի նատո, տեսնես ինչի՞ցն ա խելքից ըլել։ Եկոն ասում ա, թե Դարչոյի հոգեառ հրեշտակն ա խփել, յանի դորթ ա՞։

— Դե յես ի՛մ. վորն եղ ա ասում, վորն ել ասում ա, թե Բոլնիսի ս. Գևորգն ա բռնել:

— Ի՛, մեռնեմ նրա զորութենին, յանի եղ իւղ-ձին բռնում ա ի՛նչ անի: Հանդիպիսի կըլի եկած:

— Ասում են, թե Դարչոյենց թախտի տակը չներ ու կատվանիք են երեացել աչքին:

— Դրուստ ա, դրուստ,—խոսակցությանը խառնվեց մի ուրիշը, վորը ամենից անտարբեր, յեկել եղ ամենից ուշ և գուլպա յեր գործում:— Ողորմածիկ Դարչոյի են շաշ մերը Բոլնըսի ս. Գևորգի համար յետ դրած մողին վեր ա ունում քելեխին մորթիլ տա-լի, մատղացուն խաշլամի տեղ ուստացնում: Բա խել-քը գլխին կնիկարմատն ըտենց բան կանի՞: Վոր շաշ ա, շաշ, ե՛լի: Քելեխին եղ մողու խաշլամիցը վորն ու-տում են, ուստում, մնացածն ել դնում թախտի տակը, պահում: Յեննա, իրիկնապահին, խալիսը վոր քաշ-վում ա, Դարչոյի մերը Մարթին ասում ա, վոր միսը թախտի տակից հանի, դնի դանջինումը: Մարթեն հենց կուանում ա, վոր հանի, տեսնում ա չներ ու կատվանիք են թոփ ըլել մսի վրեն, քրքրում: Հա՛ ըս-տեղ սիրտը դնում ա վախից: Վրա յեն թափում, ջուր ածում, քրքրում, գլուխում, զորով յետ բերում: Այ ըսենց ա ըլել բանը, թե վոր դրուստն ուզում եք իմա-նա:

— Բա շուն ու կատու չի ըլե՞լ:

— Ի՛, շուն ու կատու, չե մի վոտներ: Աչքին ա երեացել:

Թաղի կանանց այցը վերջանալուց հետո հավաք-վեցին թորոսի հեռու-մոտիկ բարեկամ կանայք և բա-կըսեցին խելք-խելքի տալ, թե ինչ դարման անեն: Խորհրդակցությանը նախագահում եր հարեան խարազ Պետոյի այրի կինը—Ռոսանը, վորը հայտնի յեր իր լեղ-վագարությամբ և առանց վորի գործոն մասնակցու-թյան թաղում վոչինչ չեր կատարվում: Ռոսանի առա-

ջարկով վորոշեցին դիմել տերտերի փեսա գրբաց և հեքիմ Գրիգորին, վորը մեծ հոչակ եր վայելում նա-խապաշարված ժողովրդի շրջանում: Բերնե-թերան լեզենդներ եյին պատմում նրա անլրեպ գուշակու-թյունների և բժշկությունների մասին, այնպես վոր տարվա բոլոր յեղանակներին և շաբաթվա բոլոր որե-րին նրա ընդունարանը լիքն եր լինում ամեն ազդի, ամեն հասակի ու սեռի, զլիսավորապես կին-այցե-լուներով, վորոնք ժամերով հերթի եյին սպասում: Այդպիսի պայմաններում հեշտ չեր նրան տանից դուրս բերել առանց խոչոր և կանսիկ վարձատրության: Թորոսը մի քանի գրոշներ ուներ հոգեպահուստ, մնա-ցածը լրացրին սրտացավ բարեկամներից վոմանք, մի կլորիկ գումար կազմեցին, տվին Ռոսանի ձեռքը և դրկեցին գրբաց Գրիգորի մոտ:

Գրբաց Գրիգորը սկզբում չեմուչում արեց, փողը քիչ համարեց, ասաց, թե ժամանակ չունի, վերջը, անսալով Ռոսանի ճարտար լեզվին, համաձայնեց և խոստացավ հետեւյալ որը ճաշից հետո այցելել հիվան-դին:

Մոտ քառասուն տարեկան մսեղ մարդ եր նա՝ պստիկ ժպտուն աչքերով, կլորիկ, մաքուր սափրած կարմիր դեմքով, բաճկոնի տակ հազած գեղին չե-սունչի արխալուղով, վոսկեղուծ նեղ քամարով և ձեռ-քին շարունակ մի կարճ համրիչ գեղին հատիկներով, վոր նա ավելի շուտ ափից ափ եր նետում, քան հա-տիկները գցում:

Հետեւյալ որը ճաշից հետո նա կատարեց իր խոս-տումը և յեկավ Ռոսանի առաջնորդությամբ: Նրա ճար-պատ դեմքից, մի քիչ ծուռ գրած գլակից և սովորա-կանից ավելի ժամուն աչքերից յերեւում եր, վոր լավ կերել-խմել եր:

Յեկավ, ու թաղը նորից դընդաց: Այս անդամ հե-տաքրքրությունն ավելի մեծ եր, քան նախորդ որը, յերբ նոր եր տարածվել Մարթայի խելագարության

լուրը: Թաղի կանայք, իրար ձեն տալով, վազում ե-
յին, վորը ծծկեր յերեխային կատած, վորը վոտա-
բորիկ, վորը շտապելուց չուստի մեկը մոռացած,
մյուսը քարշ տալով վոտին, վորը գլուխ աղլուխի
ծայրերը շտապ կապելով, վորը կուրծքը կոճկելով:
Ու ամենից առաջ, թաղի անթիվ յերեխաները համար-
յա թե տկլոր ու վոտաբորիկ, թուչկոտալով ու ծկըլ-
թալով:

Դեռ նախորդ որվանից, թախտը տեղահան անե-
լուց և գետինը քանդելուց հետո, Մարթան բոլորո-
վին հանգստացել եր, լեզուն փորը գցել և իր համար
կար սուսուփուս: Այժմ ել, յերբ գրբաց Գրիգորը
մտավ, նա հանդիստ նստած եր թախտի վրա, ար-
մունկը հենել ծնկանը, գլուխը դրել ափին և ան-
թարթ նայում եր պատուհանից դուրս, կարծես խոր
մտածմունքի մեջ ընկղմված:

Գրբաց Գրիգորին հարգանքով յև պատկառանքով
առաջարկեցին խրճիթում գտնված յերկու հասիկ
հնաձև աթոռներից մեկը: Նստեց և սկսեց մանրա-
մասն հարցուփորձ անել: Սկսեցին իրար կտրելով,
իրար ուղղելով, վորը սկզբից, վորը վերջից, վորը
միջից պատմել ամբողջ յեղելությունը:

Գրիգորը նստած եր գդակը յետ գցած ճակատից,
աթոռի մեջքին յետ ընկած, ձեռքերը դրած կրծքին,
համրիչի հատիկները մեկ-մեկ գցելով, և լուս եր նա-
յելով մերթ Մարթային, վորը նստած եր անշարժ
նույն դիրքում, և մերթ դռան կողմը, վորտեղից մե-
կը մյուսի յետեկից կամացով, իրար հրելով ու
փսիսալով ներս եյին մտնում թաղի կանայք և տապ
անում իրար քամակի:

Յեղելության պատմությունը լսելուց հետո Գրի-
գորը վեր կացավ, աթոռն առավ և գնաց նստեց ուղ-
ղակի Մարթայի առջև:

Մարթան վերջապես շարժվեց, նստեց ուղիղ և
սկսեց խոր դիտել նրան հոնքերը կիտած. հետո հան-

կարծ հոնքերը վեր նետեց, լեզուն հանեց, ծափ տվակ
և սկսեց ծիծաղել:

Խելազարի այդ վարմունքի վրա մի փոթկոց
բարձրացավ թամաշաչի կանանց մեջ:

Գրիգորը սակայն վոչ մի ուշադրություն չդարձ-
րեց խելազարի այդ վարմունքի վրա, համրիչը հան-
դիստ կերպով գցեց արխալուղի գրալանը, մյուս գըր-
պանից հանեց մետաքսի թաշկինակի մեջ խնամքով
փաթաթված ինչ-վոր մի բան և սկսեց կամաց կամաց
բաց անել. հնությունից և շատ գործածելուց մաշված
ու կեղտակալած կաշեկազմ մի փոքրիկ ու հաստ գըր-
քույկ եր, վոր նա անվանում եր «Սոզոմոնի գիրք»:
Յերկար ժամանակ ծանրութարակ թերթելուց հետո
վերջապես կանդ առավ մի յերեսի վրա և սկսեց կար-
դալ կամացուկ:

Խրճիթում բոլոր շշուկները դադարեցին և ամենքը
լարված լսողություն դարձան:

Մարթան նույնպես առաջվա պես սուս եր արել,
հոնքերը կիտել և անմիտ հայտքը հառել Գրիգորի
չրթունքներին: Բայց չանցավ մի քանի բոպե, յերբ
հանկարծ նոր յերկու ձեռքով պինդ զարկեց ծնկներին,
վեր թուավ տեղից, իրեն ներքե գցեց և ուղեց դուրս
փախչել:

Խելազար աղջկա այդ նոր վարմունքի վրա խրճի-
թում տիրող հանդիսավոր սպասողական դրությունը
մեկեն սոսկալի ժխորի փոխվեց: Սարսափահար ամբո-
խը ճիչ ու աղաղակով գցեց իրեն դեպի դուռը, բայց
դուռն այնքան փոքր եր և ամենքն այնքան ճխտված
եյին իրար, վոր համարյա վոչ վոք չկարողացավ իս-
կույն տեղից շարժվել, բացի դռան մոտ կանգնածնե-
րից, վորոնք դուրս փախան գլխապատառ: Մինչև վոր
մյուսների համար ել ճանապարհ կրացվել դուռը
փախչելու, Ոսանը և մի քանի ուրիշ սրտոտներ բռնե-
ցին խելազարին, վոր փորձում եր կծել նրանց ձեռքե-
րը, տարան նորից նստեցրին թախտի վրա և գրբացի
հրամանով թոկով կապեցին նրա ձեռքերը յետեկից:

Խրճիթը դատարկվեց թամաշաչի կանանցից և յե-
ղեխաներից:

— Դուռը կողպեցեք, ել ոչովի չժողաք մտնի, —
Հրամայեց գրբաց Գրիգորը, վոր այժմ լուրջ և մտա-
զբաղ կերպարանք եր առել: — Ի՞նչ ա. մայմուն խո
չե՞ն խաղացնում ըստեղ:

Դուռը փակվեց: Խրճիթում մնացին, բացի իրեն:
Գրիգորից, Կելագարից և նրա ծերունի հորից,
Ասանը և այն մի քանի սրտոտները, վորոնք բռնել ե-
յին Մարթային:

Գրբաց Գրիգորը նստեց իր առաջվա տեղը, Մար-
թայի առջև, և նորից սկսեց թերթել «Սողոմոնի գիր-
քը»: Խելագարն այժմ նստած եր առաջվա պես հան-
գիստ, առանց նույնիսկ բողոքելու, վոր ձեռքերը կա-
պել են: Խրճիթում առ ժամանակ կատարյալ լուր-
թյուն եր տիրում: Այնինչ դրսից լսվում եր կանանց
ամբոխի ղժվագոյը, յերեխանց կանչն ու աղմուկը:
Փոքրիկ պատուհանը ծեփվել եր դրսից ներս նայող
հետաքրքիր դեմքերով ու պսպղուն աչքերով, այնպես
վոր առանց այն ել կիսախավար խրճիթը համարյա թե
մթնել եր:

Ու նոր եր սկսել գրբաց Գրիգորը համապատաս-
խան աղոթքը քթի տակ փնթփնթալ, յերբ Մարթան
նորից գժության նշաններ ցույց տվալ: Սկզբում ձեռ-
քերը ձիգումիդ արագ, վոր կապանքից ազատի, հետո
տեսնելով, վոր չի կարողանում, սկսեց վոտները բալ-
գիրալդի անել, վոլորմոլոր զալ և բղավել ու անի-
ծել:

Գրիգորը գլուխը յերերեց, գիրքը ծածկեց և վեր
կացավ:

— Տես, տես ինչ են անում նզովվածները, — ասաց
նա խորհրդավոր կերպով, դիտելով Մարթայի խելա-
զբար շարժումները: — Յետ արեք ձեռքերը, բաւքի
հանգստանա:

Մարթայի ձեռքերը յետ արին և իսկապես վոր
նա հանգստացավ և այժմ սկսեց միայն լաց լինել:

— Բա յես գրբաց Գրիգորը չեմ ըլի, թե վոր թող-
նեմ ես խեղճին ըտենց չարչարեք, — ասաց Գրիգորը
նույն խորհրդավոր յեղանակով հայտնի չե ում հա-
ցելին, և հրամայեց, վոր մի թաս ջուր բերեն:

Թասով ջուրը բերին: Գրիգորն առավ և դրեց
թախտի վրա, Մարթայի առջև:

— Մի պստիկ ըրեխա չկա^o, կանչեցեք գա:
Ոսանը դուռը բաց արեց, դրսից ներս կանչեց
թաղի յերեխաներից մեկին, վորի հագին բացի մի կեղ-
տոտ շապիկից ուրիշ բան չկար, և շտապեց դուռը
նորից փակել մի քանի կանանց յերեսին, վորոնք ոգ-
տովելով այդ հանգամանքից ուղում եյին ներս
պրծնել:

Գրիգորը յերեխայի ձեռքից բռնեց, տարավ նըս-
տեցրեց թախտի վրա և թասով ջուրը քաշեց նրա
առջև:

— Իստակ մում չունե՞ք, բերեք մի ջուխտ:
Թորոսը դողդոջուն ձեռքերով թարեքից հանեց
յերկու հատ դեղին լղարիկ մեղրամոմ, վորից նա
ամեն կիրակշեքին վառում եր իր դազգյահի վրա, և
տվավ գրբացին:

Գրիգորը մոմերը կալցրեց թասի պոնկին իրար գի-
մաց և դարձավ ներկաներին՝ ղեմքի անսովոր խոր-
շըրդավոր արտահայտությամբ:

— Բա ասիլ չեք, ես խեղճի փորը սատանեք են
մտել:

— Վո՞նց թե սատանեք, — դուրս թուավ ամենքի
բերանից:

— Սատանեքը վո՞նց կըլեն. պողավոր ու պոչա-
վոր, իսկական սատանեք եմ ասում, հանաք չկար-
ծեք:

Զարհուրանքը տիրեց ներկաներին. մի քանիսը
նույնիսկ յերեսները խաչակնքեցին: Ծերունի թորոսը
խո տեղնուտեղը քարացավ. նա միայն անստամ բերա-

նը բաց արավ և յերկայն միրուքը տմբտմբացնելով առանց այն ել ծերությունից առաջ ընկած գլուխն ավելի առաջ տարավ դեպի գրբաց Գրիգորը և հարցրեց.

— Յետո՞...

— Յետո ի՞նչ: Յետո են, վոր իրեք հատ են ու շատ ել չար: Խո տեսաք, երկու հետ, հենց վոր սկսեցի աղոթքը կարդալ, վոնց գժվացրին: Ուզում են ես խեղճին տանեն ջուրը գցեն:

Գրբաց Գրիգորի այդ խոսքերի վրա խեղճ ծերունու գլուխը սկսեց ավելի շարժվել:

— Ա՛ քե մատաղ, — բացականչեց նա լալաղին ձայնով, — ախր սատանեքը սրա փորն են մտնում, ի՞նչ անեն:

— Բա ս. Գեվորգի հըմար յետ դրած մատաղացուն մեռելի քելեխին մորթելը հանաք բան եք կարծո՞ւմ. բա սուրբն անպատիժ կթողնի՞ եղ տեսակ բանը:

— Լավ, մեռնեմ իրան, սա եր մորթիլ տվե՞լ, վոր սրան ա պատժել:

— Դու դիտում չես, բիձա ջան, սուրբն արդարին ա բռնում, վոր մեղավորները խելքի դան, իրան ընդդեմ բան չանեն: Համա դու դարդ մի անի, — ավելացրեց Գրիգորը խրախուսիչ ժպիտով խվելով ծերունու ուսին, — յես ես ա լավացնելու յեմ: Ինձ գըրբաց Գրիգոր կասեն. սատանեք չե, Սաթայելն ել դու. իմ ձեռից պըճնիլ չի: Դե, հըմի սկսենք:

Նա հրամայեց, վոր յերկու հոգի նստեն Մարթայի աջ ու ձախ կողմը, վորպեսզի, յեթե նրա փորի մեջ նստած սատանաները, ո՛վ զիտե, նորից վեր թոցնեն նրան, վոր տանեն ջուրը գցեն, բռնեն նրան, չթողնեն փախչի:

Ոսանը և մի ուրիշը նստեցին Մարթայի այս ու այն կողմը: Թորոսը տեղավորվեց թախտի ծայրին: Իսկ ինքը Մարթան նստած եր հանդիսատ, միանդամայն անտարբեր, թե ինչ են ասում և անում իր շուրջը:

Գրիգորը մոմերը վառեց, նստեց իր առաջվատեղը, աթոռի վրա, նորից բաց արավ «Սողոմոնի գիրքը» և ասաց.

— Հըմի ես աղոթքը վրա իրեք անդամ կկարդամ, սատանեքը մեկմեկ դուրս կդան, կընկնեն ես թասի ջուրը: Համա մենք տեսնիլ չենք, մենակ ես ըրեխեն կտէսնի, չունքի անմեղ ա: Պատիկ, — դարձավ նա թասի առջև ծալապատիկ նստած յերեխայինմտիկ արա՝ ես ջրին, աչքդ հեռացնես վոչ, հենց վոր տեսնաս սատանեքը մեջն են ընկնում, իմաց արա ինձ: Իմացա՞ր:

Յերեխան տմբտմբացրեց գլուխը և աչքերը չորս շինած՝ հառեց թասի ջրին:

Գրիգորն սկսեց կիսաձայն կարդալ, նայելով մերթ գրքին, մերթ Մարթային և մերթ յերեխային: Ներկաներին տիրել եր նախապաշարվածներին և սնոտիապաշտներին հատուկ այն սրբազն յերկյուղածությունը, վորով նրանք սպասում են հրաշքի. այդ տրամադրությունը, սակայն ավելի նման եր ներքին սարսափի, վորովհետեւ գործը վերաբերում եր սատանաներին: Սպասողական դրության մեջ նրանք ես իրենց կողմից նայում եյին մերթ գրբացի շրթունքներին, մերթ Մարթային և մերթ յերեխայի առջև դրած թասին, յերեկի մտածելով, թե դուցե իրենք ել տեսնեն սատանաներին, բայց անշուշտ վոչ վոքի մտքով չեր անցնում, թե ինչքան փոքր պիտի լինեն այդ սատանաները, վոր տեղավորվեն և խեղդվեն թասի ջրի մեջ:

Իսկ Մարթան նստած եր լուռ ու անշարժ և այնքան լուրջ, վոր վոչ վոք չեր կարծի, թե խելագար ե: Նա աչքերը հառել եր վառած մոմերին, վորոնք, ոստ յերեռութին, նրա խանդարված ուղեղի մեջ մութ հիշողություններ եյին հարուցանում իր առողջ ժամանակաւ նախապաշարվածրարեսպաշտական կյանքից, խաչերից ու սըրերից:

Այնինչ կանանց ամբոխի ժխորը շարունակվում

եր դուրսը, միանգամայն հակապատկերը ներկայաց-
նելով խրճիթում տիրող հանդիսավոր-սպասողական
լոռության, վորը խանգարվում եր միայն գրբացի կի-
սաձայն ընթերցումով։ Պատուհանի ապակիներն ավե-
լի եյին ծեփվել հետաքրքիր դեմքերով, ըստ յերևույ-
թին դուրսն ել զգացել եյին, վոր ներսն ինչվոր
խորհրդավոր բան ե կատարվում։

— Հը՛, մեջը չընկա՞ն, — յերկար ժամանակից հե-
տո հարցրեց դրբացը յերեխային, ընթերցումն ընդ-
հատելով։

Յերեխան առանց աչքերը հեռացնելու թասի
ջրից, գլուխը բացասական կերպով շարժեց։

— Դայիմ են նստած, ե՛, — ասաց Գրիգորը և շա-
րունակեց ընթերցումը։

Անցավ դարձյալ մի հինգ րոպե։

— Հը՛, եկի չընկա՞ն։

— Չե, պատասխանեց յերեխան։

Յերրորդ անգամ կրկնվեց նույն հարց ու պատաս-
խանը. անպիտան չար սատանաները վոչ մի պայ-
մանով չեյին ուզում դուրս գալ Մարթայի փորից և
թասի ջրի մեջ խեղզվել։

Թորոսը, Ոսանը և մյուսները մի տեսակ հարցա-
կան հայցքով, կարծես խոսքը մեկ արած, լուր նա-
յեցին իրար յերեսի. պարզ եր, վոր կասկածի ու թե-
րահավատության առաջին շողն եր այդ, վոր վայրիե-
նապես լուսավորեց նրանց խավար միտքը։

Գրիգորն իսկույն զգաց այդ ու մինչդեռ ներքին
չփոթմունքը զսպած՝ չեր իմանում ինչ անի, վոր
դուրս գա իր անհաճո դրությունից, Մարթան հան-
կարծ չանչ արավ նրա վրա, փչեց հանդցրեց մոմերը
և սկսեց բարձրաձայն ծիծաղել իր խելագար ծիծաղով։

Գրիգորը ճարպիկորեն ոգտվեց այդ հանգաման-
քից։

— Տեսա՞ք, — ասաց նա գառն ժպիտով. — Ես ինքը
չեր, ե՛. եղ են նզովյալներն եյին, վոր հանդցրին—

մթամ թե բանի տեղ չենք դնում քո աղոթքը։ Դե վոր
ըտենց ա, հըմի յես գիտամ։.

Նա պատվիրեց, վոր թասը վերցնեն, «Սոզոմոնի
գիրքը» փաթաթեց թաշկինակի մեջ, գրպանը կոխեց
և վեր կացավ։

— Կարա՞ք մի լախտի կամ մաթրախ ճարեք։

Այդ տարորինամկ պահանջը մի նոր զարմանքի ա-
ռիթ տվավ ներկաներին։

— Լախտի՞... մաթրա՞խ, — հարցրին այս ու այն
կողմից։

— Հա՛, հա՛, լախտի կամ մաթրախ, վորն ուզում
ա ըլի—մեկ ա։

— Բնչի՞ հըմար, — հարցրեց Թորոսը, ինչ-վոր
վատ բան գուշակելով։

— Դե հըմի յես նստեմ ձեզ մին-մին պատմե՞մ,
թե ինչի հըմար, — հանկարծ բղավեց Գրիգորը
գրգոված ավելի իր անհաջողությունից, քան թե այդ
հարցուվորձից։ — Ասում եմ ճարեցեք—ճարեցեք, թե
չե ես ա կթողնեմ կդնամ։

Ու մինչդեռ, նրա բարկությունից վախեցած, Ո-
սանն ու մյուսները փսփսալով խորհրդակցում եյին ի-
րար հետ, թե վորտեղից ճարեն լախտին կամ մաթրա-
խը, նա նորից գոռաց անհամըեր։

— Դե չո՛ւտ. յես խոր կարալ չեմ ըստեղ տասը ուր-
հաթ նստի. հըրես վորտեղ վոր ա կմթնի։

Ոսանը, կիսատ թողնելով խորհրդակցությունը,
շտապեց դուրս ասելով «Ես ա զնում եմ ճարեմ», բայց
բավական ժամանակ անցավ, մինչև վոր վերադար-
ձավ մի մաթրախ ձեռքին։

Գրիգորը մաթրախն առավ և հրամայեց, վոր ա-
մենքը դուրս զնան։

Այս բանն ալիւի մեծ կասկած զարթեցրեց, բայց
վոչ վոք չհամարձակվեց ճայն-ծպուտ հանել, վորով-
հետեւ Գրիգորն այն աստիճան զաժան կերպարանք եր
առել, վոր կարծես այն քաղցրախոս և ժպտերես մար-
դը չեր այլես։ Միայն Թորոսն եր, վոր համարձա-
կորեն հարցրեց։

— Յես Ե՞ր:

— Ամենքդ, ամենքդ: Դու ել, այ լակոտ,— դարձավ Գրիգորը յերեխային, վոր համարձակ ցցվել եր նրա առջև, ըստ յերեւոյթին սպասելով, թե մի նոր պաշտոն պիտի հանձնեն իրեն:

Ամենից առաջ դուրս թռավ յերեխան: Այնուհետեւ սուս ու փուս մեկը մյուսի յետեց դուրս գնացին Թորոսը, Ոսանը և մյուսները:

— Եղ խալսին ել քչեցեք ակոչի մոտից, ոչովի թողնեք, վոր մտիկ անի, — զոռաց նրանց յետեց Գրիգորը և դուռը փակեց:

Թորոսը մեծ անհանդստությամբ և մութ կասկածները սրտում նստեց հենց այնտեղ, դռան մոտ գետնի մեջ խրված սալ քարի վրա, յերկայն միրուքը կախելով չորիկ-մորիկ ծնկների արանքում, իսկ Ոսանը մտազբաղ ղեմքով սկսեց հեռացնել կանանց ամբոխը պատուհանի մոտից, միենույն ժամանակ կցկուր պատասխաններ տալով չորս կողմից իրեն ուղղված անհամբեր հարցուփորձերին: Նույն հարցուփորձերով շրջապատել ելին յերեխային և մյուսներին, վորոնք ներկա ելին յեղել՚սրճիթում կատարվածին: Սատանաների անունն իր ազդեցությունն զործեց. վոմանք յերեսները խաչակնքեցին, վոմանքահ ուղղողվ բռնված՝ կարկամեցին, վոմանք ել թերահավատներից, քթերը վեր քաշեցին ասելով՝ «սատանեք չե մի վոտներ»: Բայց ընդհանուր ժիորն այժմ միանդամից դադարեց: Հետաքրքրությունն իր գաղաթնակետին եր հասել. այժմ անհամբեր սպասում ելին, թե ինչ պիտի կատարվի ներսը, իրածիթում:

Իսկ խրճիթն առժամանակ խորհրդավոր լոռություն եր պահպանում:

Մեկ ել հանկարծ ներսից մի սարսափելի ճիչ լըսպեց, վորին հետեւցին սրտամաշ աղաղակներ:

Փողոցը մի ըռպէ քարացավ: Հետո սաստիկ իրացանցում ընկավ:

Ոսանը, վոր մեջքը պատուհանի կողմն արած՝ վոքի մոտ չեր թողնում, արագ շուռ յեկավ և ձեռքերն այտերի մոտ բռնած՝ ներս նայեց ապակուց:

Ամբոխը վրա վազեց դեպի պատուհանը:

Ներսից աղաղակները լսվում ելին միալար և քանի գնում՝ սաստիկանում ելին: Մեջ ընդ մեջ լսվում ելին ինչ-վոր բութ բանի գիտչող հարվածներ, կարծես ճիպոտով կապերտ ելին թափ տալիս և ամեն մի հարվածին հետեւում եր դրբացի հատու ձայնը, վոր առաջ եր, «ասա՛ սատանաների անունը, ասա՛ սատանաների անունը...»:

— Վո՛ւյ, քոռանամ յես, աղջի, ծեծում ամաթըսիով, ծեծում, — ճվաց Ոսանը և յերեսն ավելի պինդ կպցրեց ապակուն:

— Հա, ելի՛, հա, ելի՛, աղջի, — ասաց մի ուրիշ կին, վոր նույնպես աչքերը չուած՝ նայում եր պատուհանից ներս: — Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛նց ա թակում, ձեզ մեռնեմ... Քա՛, քա՛, քա՛, ձեռներն ու վոտներն ել կապել ա թոկով... Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛նց ա թեփոխն-թեփոխն գալիս, ձեզ մատաղ...

Ու, այլևս չկարողանալով դիմանալ, նա սկսեց ծեծել պատուհանը, հետո դարձավ դեպի ամբոխը և աղաղակեց.

— Աղջի, ի՞նչ եք ըստեղ փետացել, գնացեք բաց անիլ տվեք դուռը, սպանեց, ե՛, սպանեց են խեղճաղան...

Բայց մինչ զարմանքից քարացած ամբոխը տեղից կշարժվեր, Ոսանն ամենից առաջ վազեց դեպի դուռը և սկսեց ծեծել: Նրան հետեւցին ուրիշները: Յեկը բազմաթիվ ձեռքերի կատաղի հարվածներ ելին, վոր իջնում ելին հնությունից փայտոջիւներով ծածկված խարխուլ դռան տախտակներին: Այդ հարվածների ձայնը, ներսից լսվող Մարթայի աղեկտուր աղաղակները, դուրսն ամբոխված կանանց և յերեխաների

դժվագը մի կատարյալ Առղում-Գոմոր եյին դարձ-
բել փողոցը:

Թորոսը վեր եր կացել նստած տեղից և իր յերե-
բուն վոտների վրա հազիվ կանգնած, ծեր գլուխը հա-
զիվ տմբումբացնելով, ապուշի պես նայում եր մեկ
սրան, մեկ նրան և հարցնում.

— Ի՞նչ ա, ի՞նչ ա...

Այդ միջոցին այրի Ոսանի պսակած տղան, վորին
թարախ ման ածող Յական եյին ասում (նա շընիկ
մրգավաճառ եր), տուն դարձավ դատարկ թարախը
գլխին, կշեռքն ուսին, չիրուխը բերնին: Նա մի բոպե
կանդ առավ իրենց դռան առջև, անտարբեր նայեց
փողոցում աղմկող կանանց ամբոխին, կարծելով, թե
կանացի սովորական մի կոփիվ ե, վորպիսին համար-
յա թե ամեն որ պատահում եր թաղում, բայց տես-
նելով, վոր դա սովորական զալմաղալներից չե, այլ
ինչ-վոր մի արտակարդ բան ե կատարվում, թարա-
խը դրեց գետնին, կշեռքը հանեց ուսից, թասակի հետ-
դցեց թարախի մեջ և, չիրուխը հանելով բերնից,
հարցըց մոտ վազող կնոջը.

— Ես ի՞նչ խաբար ա:

Կինը, չափազանց հուզված, կցկտուր խոսքերով
պատմեց նրան յեղեւությունը:

— Են Մարթեն ա բղավո՞ւմ, — հարցրեց Յականը
ուշադիր լսելուց հետո:

— Հա բա՛, հա բա՛, — պատասխանեց կինը լացա-
կումած: — Սպանեց են խեղճին, սպանեց ծեծելով:
Դուռն ել, տեսնում ես, քանի վախտ ա, չի բաց ա-
նում...

Յականը հանգած չիրուխը թափ տվեց կոան վրա
և, խրելով մեջքին կաշու գոտիի մեջ, առանց շտապե-
լու, սակայն լայն քայլերով դիմեց դեպի Թորոսենց
խրճիթի դուռը, վորը դեռևս ծեծում եյին կատաղի
թափով:

— Դեսը մի տեսնամ, — ասաց նա:

Նրան իսկույն ճանապարհ տվին:

Իր Փիզիքական ուժի վրա վստահ մարդու հաճգըս-
տությամբ նա մոտեցավ, մի ձեռքը զցեց դռան տակը,
ուր տախտակներից մեկի ծայրն անձրւներից փտել ըն-
կել եր, մյուսով բռնեց յերկաթի փականքից, բարձրաց-
րեց և մի անդամից դուռը կրնկահան ներս շպրտեց
խրճիթը:

Նա մտավ և նրա յետեկից ներս թափվեց ամբոխը:

Նրա աչքի առջև բացվեց հետեւյալ տեսարանը.
Մարթան ձեռքն ու վոտքը կապած՝ կողքի վրա ընկած
եր թախտի վրա. սպիտակ աղլուխն ընկել եր գլխից
և դեմքը ծածկվել ցաք ու ցրիվ մազերի մեջ. այժմ
այլևս չեր ձչում, չեր շարժվում, այլ միայն նվում եր
Փիզիքական ցավերից հոգնած: Նրա մոտ կանգնած եր
զրբաց Գրիգորը՝ մաթրախը ձեռին, քրտնքակոխ և
հեալով: Դուն կրկնահան ընկնելը և խրճիթն ամբո-
խով լցվելն, ըստ յերեւույթին, այնքան անսպասելի
յեր նրա համար, վոր նա մի անդամից դունատվեց և
տեղնուտեղը մնաց քարացած:

Թորոսը հազիվ վոտները շարժելով մոտեցավ
թախտին և, խոնարհվելով աղջկա վրա, շշնջաց աղե-
կտուր ձայնով:

— Բալա ջան, վորդի ջան...

Ոսանը և մի քանի ուրիշ կանայք, սիրա առած
Յականի ներկայությունից, վրա թափվեցին և սկսե-
ցին արձակել Մարթայի կապանքները, ասելով՝

— Վայ քո! սիրտը չմեռնի, ես վոնց ա կուլուկապ
արել...

Յականն իր յերկայն ու մեկ հասակով ցցվեց վա-
խից և շփոթմունքից տեղնուտեղը ցամաքած Գրիգո-
րի առջև: Նրա աչքերը վառվում եյին ներքին զսպած
վրդովմունքից:

— Ես ի՞նչ ես արել, — ասաց նա, ցույց տալով
Մարթային, վորի ձայնը քանի գնում նվազում եր: —
Ըսենց ես լավացնո՞ւմ դու հիվանդներին:

— Բա վոր աղոթքը կտրում չեր, — թոթովեց
Գրիգորը:

— Ի՞նչ աղոթք:

— Սատանեքին քշելու աղոթքը:

— Ի՞նչ սատանեք, տո՛: Յես ել խո կնիկարմատ չեմ, վոր ուզում ես խարի: Խո չե՞ս ուզում ես սըհաթին բուրդղ գղեմ: Բաենց անաստոծ բան կըլի՞ , վոր դու յես արել:

— Բա զժին լավացնելը վո՞նց ես ուզում:

— Հըմի, քո խելքով, սա զի՞ւ առ դու խելոք, Ե՛լի: Տո, քու խելքդ հրես ես չի՞ . Ենքան ծեծել ես, վոր քիչ ա մնում մեռնի: Աղոթք ու սատանեք ասում ա: Տո անտեր-մունդոիկ, բա մի մարդավարի փեշակ չկա՞ր, վոր դնացել ջադուրազ կնկա փեշակ ես բոնե՞լ: Բա ել ի՞նչ ես գդակ դնում գլխիդ, դնա լաչակ ծածկի, Ե՛լի: Փո՛ւ, յես քո մարդ ասողին ինչ ասեմ: Վորտեղից ել մոգոնել ա, թե սատանեք են մտել փորը: Մի հարցնող ըլի—ի՞նչ ա սատանեն, վո՞րտեղից ամտել, ընչի՞ ա մտել: Տո, թե սատանա յես ուզում, հրեդ տեղնուտեղդ սատանա յես, Ե՛լի, վոր ոսւտուտ բաներով խալիսին խարում ես, փողերը ցնցլում, փորդ տողացնում:

— Սուստ-սուտ բաներով, բա ի՞նչ,— վրա բերի՞ մի քանի կանայք, սրտապնդված Յականի համարձակ խոսքերից:

— Ի՞նչքան ես առել, դրուստ ասա, — շարունակեց Յականը: Եղ մաթրախը հլա մի դեսը տու... .

Ու առանց սպասելու, վոր գրբաց Գրիգորն ինքը տա, մաթրախը խեց նրա ձեռքից և կրկնեց:

— Ասա, ի՞նչքան ես առել:

— Քսան մանեթ, Յական ջան, քսան մանեթ, — կանչեցին ձայներ:

— Հլա ասում եր քիչ ա, — ավելացրեց Ոսանը, վոր մյուտ կանանց հետ դեռևս զբաղված եր Մարթա-յով.

— Հլա քիչ ա, չը՞ , — աչքերը վոլորելով Գրիգորի վրա, դրուխը յերերեց Յականը: — Քսան մանեթ... . Տո, յես սաղ որը թրե եմ դալի քուչքը, որը մի ջուխա-

չուստ եմ մաշում, շատ բղավելուց բողազս ցավում ա, թարախից չլինքս փետացել ա, քիչ ա մնում կուրի ու մի քսան շայի անջախ եմ դատում, վոր ոզլուշզս պահեմ, — գու քու սուտ աղոթքի ու գրի հրմար քսան մանեթ ես առնո՞ւմ, են ել ո՞ւմից (Յականը բոնեց թուրսի թեից և առաջ քաշեց), — սրանի՞ց, ես նաշար հալուրից: Բա չամանչեցի՞ր սրա սպիտակ միրքիցը, բա ես սուրբ միրուքը խոռվ չկենա՞ քու գլխին: Քու լավացրածն ել ես չի՞ (Յականը դարձյալ մատնացույց արավ թախտի վրա կիսամեռ ընկած Մարթային), ձեռը անջաղ ա դուրս դալի, ենքան ես ծեծել:

Իսկապէս Մարթան այնքան նվազել եր, վոր թույլ հառաջանքի հետ հազիկ եյին լսվում նրա բերնից դուրս թռչող խոռքերը. «Վայ, մեռա... . վայ, մեռա... .»:

— Հանի ես սըհաթին քսան մանեթը, թե չե տեսնում ե՞ս ես մաթրախը, կոթն ել հետը կկոտրեմ վրեդ: Հը՛, ի՞նչ ես փետացել, հանի քեզ ասում եմ, — գոսաց Յականը աչքերը կրակ կորած:

— Ախալեր, ի՞նչ ես ուզում ինձանից, — խոսեց վեր ջապէս գրբաց Գրիգորը, չուզելով այդպիս չուտ անձնատուր լինել, առանց իրեն արդարացնելու: — Յես խո զոռով չեկա. չեյին ուզում — չեյին կանչի, փողն ել խո զոռով չառա, չեյին ուզում — չեյին տա: Ա՛յ, հարցըու, Ե՛լի. յես դալիս ի՞ , հազար ու մի աղաչանք-պազս տաներով չըերի՞ն:

— Հըմի չես ուզում տա, Ե՛լի, — հանգիստ լսելուց հետո ասաց Յականը չարագուշակ ձայնով և մաթրա-ը բարձրացրեց:

Կինը, վոր կանգնած եր կողքին, վրա ընկավ նրա մին:

— Վայ, Յական ջան, — չենջաց նա վախեցած, — անիծի...

— Տո՛, դե՞նը գնա հա՛, — ասաց Յականն արհամար-սնքով. թեը խելով կնոջ ձեռքից: — կանիծի... . Յես Եկ սրտ աղոթոքին եմ հավատում, մեկ ել անեծքից

վախենում։ Սուտ իսո չի ասում։ Ես դիմի ձեր բաներն ա։ Դուք, վոր չըլեք, ես ջաղուբազները վո՞րտեղից կըլեն… Հը՛, ի՞նչ ես ասում, — դարձավ նա գրեաց Գրիգորին, — տալիս ե՞ս, թե չե։

Գրեաց Գրիգորը դեռևս տատանվում եր. յերեսում եր, վոր շատ դժվար եր նրա համար քսան ոռւրլուց զրկվելը, բայց մի կողմից Ցականի բռնած սպառնական դիրքը, մյուս կողմից այն վախը, վոր բռնել եր նրան, տեսնելով իր «Բժշկության» հետեանքը, ստիպեցին նրան հնագանդվել։

— Վոր զոռի յես կանգնել, կտամ, ճարս ի՞նչ, — ասաց նա ձեռքը կոխելով՝ բաճկոնի ծոցի դրսանը։ Այստեղից հանեց կաշվի մի հաստ թղթապանակ, համբեց քսան ոռւրլին և, տալով Ցականին, ավելացրեց. — տալիս եմ, համա իմաց կաց, վոր արածդ մարդավարություն չի։ Ամսոս իմ ժամանակը, եսքան վախո, վոր իմ տանը նստած ըլեյի…

— Դե, ել շատ մի խոսա, — ընդհատեց նրան Ցականը, — փաստ-փուսեդ քաշի գնա։

Գրեաց Գրիգորը գդակը քաշեց աչքերին և, ամոթից ու անզոր կատաղությունից դունատ, կանանց ծաղրական ժպիտների տակ դիմեց դեպի դուռը։

— Համա չկարծես, թե եղ ա պրծար, — կանչեց նրա յետեից Ցականը. — Թող մի ես աղջիկը չլավանաքու դամդեքից… իմ մարդավարությունը դու են վախտը կտեսնես…

Մարթան թեև շուտով լավացավ մաթրախի խարաններից, բայց մի քանի ամսից հետո մեռավ նույն խելագար դրության մեջ։ Նրան շուտով հետեաց և ծերունի հայրը։



ԳԻԱԾ 50 ԿՈԴ.

46.238

251

НАР-ДОС

Рассказы

Гиз Ари. ССР, Ереван, 1938 г.